

# Haykakan Kilikia

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

Kurkdjian, Vahan M. (1863-1928). Haykakan Kilikia. 1919.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF. Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :

\*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.

\*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer [ici](#) pour accéder aux tarifs et à la licence

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

\*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.

\*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment passible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter [reutilisation@bnf.fr](mailto:reutilisation@bnf.fr).

L 1.42

P15

1320

# Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն ԿԻԼԻԿԻԱ

Ուսումնասիրութիւն մը

Կիլիկիոյ Հայկ. Թագաւորութեան վրայ

«Պանծաշին Այաս»

Աշխատանք

Պատկերներով և քարտէսով զարդարուած

Գրեց Վ. Մ. ՔԻԻՐՔՃԵԱՆ



«Կոչնակ»ի Հրատարակչական Ընկերութիւն

ՆԻԻ ԵՈՐՔ

1919

**Վ. Մ. ՔԻՒՐՔՃԵԱՆԻ (Բակուբան)**  
**ՈՒՐԻՇ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

---

**ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԻՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՔ.**— Պատմութեան դասագիրք: 1892, Կ. Պոլիս.

**ԿԻՊՐՈՍ ԿՂՋԻ.**— Աշխարհագրական եւ պատմական տեսութիւն.— Հայ դաղթականութիւն: 1903, Նիկոսիա, Կիպրոս.

**ԼՈՒՍԱԲԵՐ.**— Գրական Հաւաքածոյ, Ա. Պըրակ, Էջմիածնի Հիմնարկութեան Հաղար Վեցհարիւրամեակին առթիւ: 1903, Նիկոսիա, Կիպրոս.

**ՄԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ ԿԻԼԻԿԻՈՅ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ.** 1904, Նիկոսիա, Կիպրոս.

**ՍԱՀԱԿ ԵՒ ՄԵՍՐՈՊ, Հայ Մտքի Լուսաւորիչներ:** 1914, Պոսթոն.

**ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ, Հայրենեաց Ազատարար:** 1917, Նիւ Եորք.

Հանրապետական հրատարակչություն

412674

«Կոչնակ»ի Մատենադար Հրատարակչություն

# Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Կ Ի Լ Ի Կ Ի Ա

Գրեց՝

Վ. Մ. ՔԻՒՐՔՉԵԱՆ



ՆԻՒ ԵՈՐՔ  
1919

Հովհաննիսյան

ASO 90 06128



D 4 7 ap



## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Կիլիկիոյ վրայ Հայերու քաղաքական իրաւունքը վերջերս վէճի առարկայ եղած է ինչ ինչ օտար շրջանակներու կողմէ :

Այս տեսրակիս պարունակած երեք ուսումնասիրութիւնները, զորս «Կոչնակ-Հայաստանի» հրատարակեց սակէ առաջ, կը հաստատեն թէ Կիլիկիա գերագանցօրէն հայկական երկիր մըն է, եւ հետեւաբար պէտք է անբաժան մասը կազմէ Նոր Հայաստանին :

Ասոնց առաջինին անգլիերէնը տեսնուեցաւ *ՏՀԻ Արմինիըն Հերալտ* ամսագրի 1919 Յունուար թիւին մէջ, եւ իբր առանձին տեսրակ հրատարակուեցաւ՝ Նիւ Եորքի Հայկական Փրէս Պիւոռլին կողմէ :

Տեսրակիս քարտէսը եւ պատկերները արտատպուած են վեներտիկի Միսիթարեան Հարց հրատարակութիւններէն :

Նիւ Եորք, Յունիս 1919





## Կ Ի Լ Ի Կ Ի Ո Յ Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Թ Ա Գ Ա Ի Ո Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Ա.

Անցած Նոյեմբերի 10-ին, Փրանսական նա-  
ւարածին մը գրաւեց Ալեքսանտրէզը :

Այդ դէպքը հրճուանքով ողջունուեցաւ ամ-  
բողջ աշխարհի Հայերուն կողմէ, իբրեւ իրա-  
կանացումը հնգադարեան երազի մը :

Ալեքսանտրէզի նաւահանգիստը կը գտնուի  
Գիլիկիոյ հայկական թագաւորութեան սահ-  
մաններուն մէջ : Կարճ միջոց մը Եգիպտոսի  
Մէմլուք սուլթաններուն ձեռքն անցնելէ վերջ՝  
ետ առնուեցաւ Կոստանդին Բ. թագաւորին  
օրով, 1347-ին, Հիւրանոցի Ասպետներուն օգ-  
նութեամբը : Եգիպտական զօրքերը նորէն ար-  
շաւեցին քառորդ դար վերջ, ողողեցին ամբողջ  
երկիրը, կործանեցին քրիստոնէութեան Արե-  
ւելքի վերջին ամրոցը, եւ Եգիպտոս տարին  
լեւոն Ե. վերջին թագաւորը : Տարաբախտ  
իշխանը ութը տարի վերջ իր գերութենէն  
ազատուելով Եւրոպա գնաց, քրիստոնէայ աշ-  
խարհին համակրութիւնը շահելու նպատակով :  
Նա սիրալիր ընդունելութիւն գտաւ Ֆրանսայի  
արքունիքին մէջ, եւ մի քանի տարի վերջ Շարլ

Թագաւորին կողմէ Անգլիա դրկուեցաւ՝ իբրեւ պատգամաւոր հաշտութեան: Այն միջոցին Հարիւրամեայ Պատերազմը կը մղուէր, եւ հայ թագաւորը կը յուսար դադրեցնել տալ թըշնամութիւնը Եւրոպայի այդ երկու մեծագոյն պետութիւններուն միջեւ, եւ վերջ ի վերջոյ անոնց օգնութեամբ ձեռք բերել իր հայրենակիցներուն փրկութիւնը եւ իր գահուն վերահաստատումը: Լեւոն սրտառուչ ատենախօսութիւն մ'ըրաւ Ռիչարտ Բ.ի եւ անոր խորհրդարանին առջեւ, ի Ուէսթմինսթըր, եւ Արեւելքի քրիստոնէից տխուր պատկերը ներկայացնելով՝ այսպէս վերջացուց իր խօսքերը. — «Շա՛տ երկար տեւեց թշնամութիւնը Անգլիոյ եւ Ֆրանսայի միջեւ: Պէտք է խնդրուի երկու կողմէն ալ որ գոհանան իրենց ընդարձակ աշխարհներովը եւ վերջ մը դնեն այս պայքարին, որպէս զի անոնք կարողանան վանելու Քրիստոսի թըշնամիները եւ խորտակելու լուծը Արեւելքի քրիստոնէից, որ օրէցօր կը սպասեն ձեր օգնութիւնը, ո՛վ պերճատիայլ իշխաններ»:

Ատենախօսութիւնը խոր տպաւորութիւն գործեց այդ վեհաշուք ժողովին վրայ, եւ թագաւորը հաւանեցաւ որ թշնամական գործողութիւնք յետաձգուին, ըստ խնդրանաց Լեւոնի զոր կ'անուանէր հօրեղբորորդի, — «nostre cousyn le roy d'Armenye». բայց, դժբախտաբար, փոխադարձ ատելութեան հուրը այնչափ սաստիկ էր որ կարելի չէր այնչափ շուտ մարել:

անիկա . ոեւէ համաձայնութիւն չը գոյացաւ  
հաշտութեան առաջին քայլերուն մասին , եւ  
լեւոն , իր ջանքերուն եւ ակնկալութիւններուն  
մէջ յուսախաբ՝ վերադարձաւ Փարիզ ու հոն  
գերեզման մտաւ 1393 Նոյեմբեր 29-ին :

Հայոց վերջին թագաւորը վախճանեցաւ ,  
բայց հայ ազգը այն օրէն մինչեւ հիմա ամբա-  
պէս կառչած մնաց այն յոյսին թէ Եւրոպայի  
քրիստոնեայ պետութիւնները , մասնաւորապէս  
Անգլիա եւ Ֆրանսա , վերջապէս պիտի հասնին  
իր օգնութեան : Բնական է ուրեմն որ ամեն  
մէկ Հայու սիրտը թրթռայ լսելով Հայաստանի  
հին նաւահանգստին ազատումը անգլո-Ֆրան-  
սական դաշնակցութեան շնորհիւ :


«Հայաստան» անունը սովորաբար կը  
տրուի՝ Արարատեան Լեռանց շրջակայ երկրին  
եւ Եփրատի ու Տիգրիսի վերին հովիտներուն ,  
բայց պատմականապէս , քաղաքականապէս եւ  
և ցեղագրապէս անիկա կը տարածուի մինչեւ  
Տաւրոսի արեւմտեան լեռնաշղթան ու Միջերկ-  
րականի արեւելեան հիւսիսային եզերքը : Ուստի  
հիմնական արդարութեան եւ քաղաքակրթու-  
թեան դատին պահանջումն է որ Միջերկրականի  
ափերուն այդ մասը կցուի Հայկական նոր Պե-  
տութեան :

Փոքր Ասիոյ արեւելեան հարաւային կողմին  
այն երկու գաւառները , որոնք չորրորդ դարուն  
մէջ Կիլիկիա եւ Եփրատացիք կը կոչուէին , եւ  
որոնք վաղուց իսկ Հայերու բնակավայր ե-

դած էին՝ գերակշռօրէն հայկական կեդրոններ  
դարձան բիւզանդական ազդեցութեան նուա-  
զումին վրայ, Սարակինոսներու ծագումէն յե-  
տոյ: Հետաքրքրական է դիտնալ այս առթիւ թէ  
Տաւրոսեան Լեռնաշղթային հիւսիսային դար-  
վարը, Կիլիկիոյ սահմանակից գտնուող եւ Մով-  
սէս Խորենացիի աշխարհագրութեան մէջ Ա-  
ռաջին Հայք անուանով յիշուող երկրամասը, այն  
առաջին հանգրուանն էր որմէ դէպի Արարատ  
ուղղուեցան Արմէնները (մեր նախահայրերը)  
երբ Թրակիայէն եւ Հելլեսպոնոսէսէն դէպի  
արեւելք կը յառաջանային՝ Քրիստոսէ իբր  
1000 տարի առաջ:

Մեծն Տիգրանի կարծատեւ կայսրութեան  
մաս եղած էր Կիլիկիա, 69-ին, Ն. Ք.: Այդ  
թուականէն վերջ գաւառին նաւահանգիստնե-  
րը հետզհետէ աւելի բացուեցան Հայերու առ-  
ջեւ: Յոյժ նշանակալից իրողութիւն մ'է որ  
չորրորդ դարու լատին պատմագիր Ամմիանոս  
Մարկելոսի գրչին ներքեւ Հայկական Ծոց (Si-  
nus Armenicus) կը կոչուի Միջերկրականի ա-  
րեւելահիւսիսային անկիւնը: Չորրորդ դարու  
երկրորդ կիսուն էր որ Ս. Յովհան Ոսկերեբան,  
նամակ գրելով իր աքսորավայր Կոկիսոնէն, —  
Հաճինի եւ Չէյթունի միջեւ գիւղ մը — շնոր-  
հակալութիւն կը յայտնէր՝ հայազգի տեղացի-  
ներու եւ հայազգի Դիոսկորոս անուն ազնուա-  
կանին բարեսրտութեան համար: Հայազգի էր  
նոյնպէս Անտիոքի Մելիտոս եպիսկոպոսը,

որուն աշակերտած էր Ոսկերեւան: Թէոտորէ,  
 որ հինգերորդ դարուն վ'ապրէր՝ Կոկիսոնը կը  
 դնէ Հայաստանի սահմանին մէջ: Այդ կողմե-  
 րուն հայերը վեցերորդ դարուն այնչափ բազ-  
 մացած էին որ Քրիստափոր կաթողիկոս պէտք  
 տեսաւ դանոնք զգուշացնելու Նեստորի վարդա-  
 պետութեանց դէմ: Տասնըմէկերորդ դարուն  
 գրեթէ ամբողջ դաւառը կը կառավարուէր հայ  
 պաշտօնակալներու կամ աւատական պարօննե-  
 րու ձեռքով, զորօրինակ Սաշատուր Զօրավար՝  
 Իսաւրեան Անտիոքի մէջ, Օշին՝ ի Լամբրոն,



Ապլղարիսլ՝ ի Տարսոն, Հալկամ՝ արեւմտեան ծովեզերքին վրայ, Բազունի՝ լեռներուն կողմը, Թաթուլ՝ ի Մարաշ, եւն. եւն. (\*): Աւելի ընդարձակ եւ գրեթէ անկախ տիրապետութիւն մ'ունէր Գող Վասիլ, զոր արեւմտեան պատմագիրները կ'անուանեն Գովասիլիօ, իսկ Արարներ կ'անուանեն՝ Պասիլ-էլ-էրմէնի: Անոր ձեռքէր Ամանոս լեռներէն մինչեւ Եփրատ տարածուող Երկիրը, — Քեսուն, Հիւսնիմանսուր, Ռապան, Թլպաշար, Այնթապ, եւն.: Այդ հողերուն մեծ մասը քիչ վերջ կցուեցաւ Կիլիկիոյ Հայկական իշխանապետութեան, զոր հիմնած էր Ռուբէն, 1080-ին, Անիի թագաւորութեան անկումէն 35 տարի վերջ: Ռուբէնի յաջորդը Կոստանդին եւ ուրիշ հայ պարոններ սիրով ընդունեցին առաջին Սաշակիրները, որ 1098ին կ'երթային Սուրբ Երկիր, անոնց օգնեցին պաշարներով, եւ անոնց հետ զինակցաբար կռուեցան Մազմետականներուն դէմ: Արեւմուտքի Քրիստոնեաներուն հանդէպ ցոյց տրուած այս անկեղծութիւնը, զոր անընդհատօրէն արտայայտեցին իրարու յաջորդող հայ իշխանապետները, վերջապէս վարձատրուեցաւ Հէնրի Դ.

---

(\*) Արաբ պատմիչներու վկայութեան համեմատ Հայերը իրենց գեղաւէն հալալ քաղաքէն Սիս փոխադրուեցան 809-ին: Ազգային պատմագիրները կ'ըսեն թէ Սասունէն յիսուն հայ իսխաններ գաղթեցին Կիլիկիա, 900 թուականին:

կայսրէն : Նա թագաւորական տիտղոսով եւ թագով պատուեց իշխան Լեւոն Բ.ը (Թագաւոր Լեւոն Ա.), 1199-ին : Իրմէ առաջ, 1196-ին, բիւզանդական կայսր Ալեքսիս Անգելոսն ալ թագաւորական տիտղոս տուած էր Լեւոնին :

Այս Լեւոնը, Մեծագործ կոչուած, հոյակապ դէմք մըն է հայ պատմութեան մէջ : Կարող զօրական եւ ճարտար դիւանապետ ըլլալով՝ նա մեծապէս ընդարձակեց Հայկական Պետութեան տնտեսական եւ քաղաքական զօրութիւնը : Շրջակայ մահմետական ազգերը չէին համարձակիր, անոր երկրին մօտենալու : Նա կարեւորութիւն չընծայեց մինչեւ իսկ նշանաւոր Սալահէտտինի պահանջումներուն՝ Պաղրաս բերդի մասին : Լեւոն անձնական բարեկամն էր Ռիչարտ Առիւծասիրտին եւ անոր զինակիցը՝ Կիռ Իսաաքի դէմ Կիպրոսի մէջ :

Երբ Ռիչարտ ամուսնացաւ Բերինգարիա իշխանուհիին հետ՝ Լեւոն հարսնիքին ներկայ եղած էր, կնքահայրի պաշտօնով . իսկ անկէ մի քանի ամիս վերջ՝ իր զօրքերովը միացած էր անգլիական եւ Ֆրանսական բանակներուն՝ որոնք կը պաշարէին Ակրոնը (Աքեա), Սուրիական ծովեզերքին վրայ, 1191-ին : Այդ արշաւանքին ղեկավարներուն գովաբանութեան նուիրուած գերմանական հին քերթուածի մը մէջ կ'ըսուի —

Kunic Leon Von Ubia (Rubinian ?)

Ouch der Von Armenia .

Լեւոն Թագաւոր Ռաբիայի (Ռուբինեան<sup>o</sup>)  
Ինչպէս նաեւ՝ Հայաստանի :

Լեւոնի իշխանութեան ներքեւ Կիլիկեան  
Հայաստան խոշոր քայլեր առաւ վաճառակա-  
նութեան, արհեստից եւ երկրագործութեան  
մէջ : Երկրին ժողովուրդը՝ որ առաջուց Հայե-  
րէ, Յոյներէ եւ Ասորիներէ կը բաղկանար,  
չուտ աճեցաւ, ոչ միայն Հայերով, որոնք Մեր-  
ձաւոր Արեւելքի զանազան կողմերէն կուգային  
ազգային դրօշակին ներքեւ ապրելու համար,  
հապա նաեւ Սուրիոյ եւ Պաղեստինի եւրոպացի  
գաղթականներով, որոնց վիճակը երկիւղալի  
դարձած էր Երուսաղէմի լատին թագաւորու-  
թեան անկումին հետեւանքովը, 1187-էն ի վեր :  
Մինչեւ անգամ թիւրք զեղապետներ հպատա-  
կեցան հայ թագաւորին, որուն արդարասիրու-  
թեանը եւ վեհանձնութեանը կը վստահէին  
կատարելապէս(\*) : Երկրին զարգացումն ու  
բարգաւաճումը մեծ զարկ առին շնորհիւ այն  
մասնաւոր արտօնութիւններուն զորս Լեւոն

---

(\*) Սելնուգ Թիւրքերու իշխանական ցեղին  
պատմիչը, Իպն Էլ Պիպի, կը վկայէ որ Կեսա-  
րիոյ սուլթանը Քէյխավուզ Երզնումով եւ գրով  
խոստացաւ Լեւոնին՝ «անգամ մըն ալ չը յար-  
ձակիլ հայկական ամրոցներուն վրայ, նոյն-  
պէս՝ 12,000 մէտոտ ցորենի պաշար դրկել էՐ-  
ՄԷՆԻՍԹԱՆ» :



պարզեւեց Հարաւային Եւրոպայի առեւտրա-  
կան ազդերուն, եւ որոնցմով ատոնք դրդուեցան  
ու քաջալերուեցան՝ գործակատարներ եւ դաւ-  
թաբնակներ ղրկելու Հայոց երկիրը՝ սկսե-  
սական, առեւտրական եւ ճարտարարուեստա-  
կան ձեռնարկներու համար: Պետութեան քա-  
ղաքական կազմակերպութիւնը, վարչական այլ  
եւ այլ պաշտօնարանները, ինչպէս նաեւ ար-  
քունի դարպասը, եւրոպականին համեմատ ձե-  
ւակերպուեցան: Հայ եւ եւրոպացի իշխանական  
ընտանիքներու միջեւ ամուսնական խնամու-  
թիւնները բազմացան, եւ տեղացի կղերին ու  
լատին կրօնաւորներու ձեռքով շատ մը ու-  
սումնավայրեր հաստատուեցան (\*):


---

(\*) Երուսաղէմի լատին թագաւորութեան  
թագուհիներուն գրեթէ ամենքն ալ Հայագգի  
էին: Թորոս Ա.ի դուստրը Արդա ամուսնացաւ  
Երուսաղէմի առաջին թագաւոր Պալտուին Ա.ի  
հետ: Մալաթիոյ Գաբրիէլ իշխանին դուստրը  
Մարսիլ ամուսնացաւ Պալտուին տը Պուրկի հետ  
Ասոնց երիցագոյն դուստրը Մելիսանթ եղաւ  
խնամակալ-թագուհի, իր որդւոյն Պալտուին  
Գ.ի անչափահասութեան ատեն: Լեւոն Ա.ի  
դուստրը Ռիթա ամուսնացաւ Ժան տը Պրիէնի  
հետ, որ Երուսաղէմի թագաւորութեան տիտ-  
ղոսին տէրն էր: Միւս կողմէ շատ մը հայ թա-  
գաւորներ ամուսնացած էին եւրոպացի իշխա-  
նուհիներու հետ:

Այդ դործունէութեանց, կապակցութեանց եւ բարեկարգութեանց հետեւանքով, ու երկրին բնական ճոխութեանց պատճառով՝ Հայկական Կիլիկիա արագապէս ծաղկեցաւ «դրախտանման», ըստ բացատրութեան Վահրամ Ռաբունի, ժամանակակից քերթող-սլատմագիր մը: Սիս, մայրաքաղաքը, զարդարուեցաւ պալատներով, հանրային եւ մասնաւոր շէնքերով, հիւանդանոցներով, պարտէզներով (\*\*): Հոյակապ եկեղեցիներ կառուցուեցան քաղաքին զանազան ազգերուն եւ դաւանութիւններուն համար, — Հայերուն, Յոյներուն, Ֆրանգներուն, Ճենովացիներուն, Վենետացիներուն, Վրացիներուն եւ Ասորիներուն համար: Կանոնիկոս Վիլեպրանտ տ'Օլտէնպուրկ, որ 1211-ին Սիս այցելած էր՝ զայն կը նկարագրէ իբրեւ «բնակատեղի անհամար եւ մեծատուն մարդոց»: Հռոմէական Կաթոլիկ Եկեղեցւոյ շարականներէն մէկուն մէջ այդ քաղաքը կը յիշատակուի իբրեւ «Սիս Քրիստոնէից» (Sis Christianorum):

---

(\*\*) Զապէլ Թագուհի սովոր էր անձամբ երթալ ծառայել հիւանդներուն՝ այն հիւանդանոցին մէջ գոր ինք հիմնած էր 1214-ին:



Համբրոնի Ամարանոցները

Ամենէն հիանալին էր այն դերը զոր այս փոքրիկ թագաւորութեան կեանքին մէջ կատարեց Այաս նաւահանգիստը :

Հիմակուան Եռամուրթալըդ ականէն քանի մը մղոն դէպի արեւմուտք, Հայկական Օոցին ավերուն վրայ, գրեթէ Ալէքսանտրէդի դիմացը հաստատուած՝ Այաս քաղաքը եղաւ ծաղկեալ շահաստան մը, ուր կը փոխանակուէին Արեւելքի և Արեւմուտքի ապրանքները : Կար թամանակ մը, գրեթէ հարիւր տարի տեւողութեամբ, երբ Միջերկրականի ամբողջ արեւելեան եւ արեւմտեան ծովեզերքը կը գրտնուէր Մահմետական տիրապետութեան ներքեւ, եւ ատոր համար եւրոպական նաւեր կը վախնային կամ կը խորչէին անոնց մօտենալէ : Այն ատեն ասիական աշխարհի ցամաքային ճամբաներէն ներս մտնելու միակ դուռն էր Այասի ապահով նաւահանգիստը — «Portus Ayacii, Domini Regis Ermenie» (\*):

---

(\*) Այասի աշխարհագրական դիրքն այնպէս անսովոր էր : Հայկական Օոցը, 45 մղոն երկար եւ 25 մղոնի չափ լայն, հովերու դէմ ուստաւարուած է՝ գինի շրջափակող լեռներով : Վերոհին ատեններս, շատ տարիներէ ի վեր այս

Երկրին գանձարանը անհուն գումարներ կը ստանար ներածութիւններու եւ արտածութիւններու վրայ դրուած մաքսատուրքէն : Այլապէս՝ անկարելի պիտի ըլլար մղել շարունակական պատերազմները թշնամիներուն դէմ, եւ երկիրը վերաշինել յաճախադէպ արշաւանքներէ վերջ : Այսպիսի մաքսատուներ կը կոչուէր քաժտուն . ըստ *Եւրոպացոց Pasidonium* :

Հետեւեալ կերպով կը գրէ Մարգո Բօլօ, վենետացի ճամբորդը որ Այասէն դէպի Չինաստան ուղեւորեցաւ 1271-ին .

«Հայերը ծովուն վրայ ունին քաղաք մը, Լայաս անունով, ուր ընդարձակ տուր եւ առ կը կատարուի : Որովհետեւ գիտնալու էք թէ ներսերէն այս քաղաքը կը բերուին ամեն տեսակ համեմներ, մետաքսէ եւ ոսկեհիսս նիւթեր եւ ուրիշ թանկագին վաճառքներ : Վենետիկի, Ճէնովայի եւ ուրիշ երկիրներու վաճառականները այս տեղ կուգան ապրանք ծախելու եւ գնելու համար : Եւ ով որ Արեւելք ուղեւորիլ կ'ուզէ, վաճառական կ'ըլլայ կամ ուրիշ, այս Լայաս քաղաքէն ճամբայ կ'ելլէ» :

---

Ծովածոցը կը գործածուի իբրեւ ճմեռնային սպասարան մը արեւելեան Միջերկրականի անգլիական նաւախումբին :

(Անգլիացի բանաստեղծ) Չոսըրի «Canterbury Tales» գործին մէջ Այասը կը յիշատակուի Leyyes անունով :

Աւելի առաջ, 1269-ին, Մարգօ Բօլոնի հօրեղբայրը Այաաէն Ակրոն ճամբորդեր էր Հայկական նաւով :

Այասի ստացած անհուն կարեւորութիւնը, իբրեւ առեւտրական եւ քաղաքական գործողութեանց խարխախ, վտանգաւոր բան մը կը թուէր այն ժամանակի մահմետական ազգերուն, եւ մանաւանդ Եգիպտոսի սուլթաններուն : Ուստի ատոնք այն որոշումին եկած էին որ Այասը գրաւեն, Հայկական Թաղաւորութիւնը կործանեն, եւ այդ կերպով Արեւելքի մէջ քրիստոնէութեան ազդեցութիւնը բոլորովին ջնջեն (\*):

Անկարելի է առանց ամենախոր յուզումի

---

(\*)Վաճառականներ կուգային Այաս՝ հետեւեալ տեղերէն, — Վենետիկ, Ճենովա, Բիզա, Բավիա, Մանդուա, Լիվօնօ, Ֆիրէնցէ, Սպանիա, Կատալոնիա, Սիկիլիա, Պարսելոնա, Սարահոսա, Մարսիլիա, Բրովանս, Նիմ, Նարբօն, Մօնթէլիէ, Կ. Պօլիս, Տրապիզոն, Եգիպտոս, Սիրիա :


Վաւերաթուղթեր կան որ կը ցուցնեն փլամական երկիրներու և Հայաստանի միջև առեւտրական յարաբերութիւններու գոյութիւնը :

Հայ վաճառականներ հաստատուած կային Երուսա, գլխաւորապէս Իտալիա եւ Ֆրանսա : Երեսունվեց իտալական քաղաքներու մէջ կային Հայկական Կեդրոններ կամ հիւրանոցներ (Հայ-տուն) :

կարգալ տարեգրութիւնները այն բուն պայ-  
քարին զոր Հայերը մղեցին եգիպտական բա-  
նակներուն եւ սելճուգեան եւ թիւրքմէն հրո-  
սակներուն դէմ, Տասներեքերորդ դարու երկ-  
րորդ կէսէն մինչեւ Տասնեւչորրորդին վերջը:  
Արեւմուտքի ազգերը բաւական մտածեցին Հա-  
յաստանի նկատմամբ, մասնաւորապէս Հոռ-  
մէական եկեղեցւոյ Աթոռը հոգածութեան ա-  
ռարկայ ըրաւ անոր բախտը. դտնուեցան մար-  
դիկ, ինչպէս Մարինօ Սանութօ — Իտալացի  
դիւանագէտ եւ ուղեւոր—որ Հայաստանի սպառ-  
նացող վտանգին ահազանգը հնչեցուցին. բայց  
եւ այնպէս չը կատարուեցաւ գործնական բան  
մը բացի համակրանքի արտայայտութիւններէ,  
որոնք իրականին մէջ աւելի չարիք պատճառե-  
ցին քան բարիք: Այդ կացութիւնը աւելի լաւ  
կը պատկերանայ մեր աչքին Ռենալտիի հետեւ-  
եալ տողերովը. — «Մինչդեռ այս ազգերը (Եւ-  
րոպացիք) բաղձանքներով եւ գրուածքներով  
միայն կը կռուէին հեթանոսներուն հետ՝ անոնք  
(Եգիպտացիք) Հայաստանը կը կործանէին սու-  
րով եւ հուրով. մինչդեռ Ֆրանսայի թագաւորը  
(Ֆիլիք տը Վալուա) որոտագին սպառնալիք-  
ներ կ'ընէր Արեւմուտքի մէջ, եւ մինչդեռ քա-  
րոզիչները Սաչակրութեան վարձատրութիւն-  
ները կը հռչակէին՝ անդին անհաւատները, ա-  
հագին պատրաստութեանց զրոյցներովը գրգռու-  
ած՝ Քրիստոնեաներուն վրայ կ'իյնային ի-  
րենց բոլոր ուժովը:»

Հայերը մինակ թողուեցան արդարև, բայց  
չը թուլցան: Իրենց պատերազմիկները արիա-  
բար դիմադրեցին ահաւոր վտանգներու, եւ ի-  
րենց առաջնորդները մեծ իմաստութեամբ վա-  
րեցին Պետական նաւուն դեկը: Սաչակրու-  
թեանց պատմութիւնը ուսումնասիրող հեղի-  
նակներ կը գովեն այն օրուան Հայ դիւանագի-  
տութիւնը, որ յաջողած էր ձեռք բերելու Թա-  
թար կայսրերու բարեացակամութիւնը: Թա-  
թարները, որ կեդրոնական Սսիայէն դուրս գա-  
լով դէպի Արեւմուտք յառաջացած էին՝ Եգիպ-  
տոսի սուլթաններուն դէմ կատաղի պայքար կը  
մղէին որպէսզի Մերձաւոր Արեւելքի մէջ գերա-  
կըչիւ դառնան, եւ Միջերկրականի նաւահան-  
գիստներուն տիրանան: Քրիստոնեայ պետու-  
թիւնները արտանց ողջունեցին երեւումը Թա-  
թար ազգին, իբրեւ մրցակից մը իրենց հօօր ո-  
սոխին, և իբրեւ ապագայ դաշնակից մը իրենց,  
— և ջանացին բարեկամական յարաբերութիւն-  
ներ մշակել անոր հետ: Այս տրամադրութիւնը  
պատրաստական ընդունելութիւն գտաւ Թա-  
թար Սաներէն ալ, որոնք թէեւ կրօնքով Պուտ-  
տայական՝ իրականապէս շատ կարեւորութիւն  
չէին ընծայեր կրօնքի, եւ իրենք զիրենք Քրիս-  
տոնէութեան հակամէտ ցոյց կուտային վարպե-  
տօրէն: Ու այս կերպով՝ անոնց զօրապետները  
ատեն ատեն ներկայ կը գտնուէին Քրիստոնէա-  
կան արարողութիւններու, թոյլ կուտային որ  
Քրիստոնեայ կղերականներ պաշտամունք կա-





Կիւղնու (Սէյհան) Գետի Ջրվեժները

տարեն իրենց բանակին Քրիստոնեայ գինուոր-  
ներուն համար, և իրենք ալ քրիստոնեայ կիներ  
կ'առնէին ամուսնութեան: Իրաւ է որ Իսլամա-  
կան քարոզիչները աւելի յաջող դուրս եկան, եւ  
Թաթարները վերջ ի վերջոյ ընդունեցին Մու-  
համմէտի կրօնքը, ինչ որ դառն յուսախաբու-  
թիւն պատճառեց թէ՛ Եւրոպացիներուն եւ թէ՛  
Հայերուն, բայց եւ այնպէս՝ Խաները նորէն Չա-  
նացին իրենց կողմը շահելու Արեւմուտքի ազ-  
դերը: Հանրածանօթ պատմագիր Միշոյ այս-  
պէս կ'ըսէ Ղազանի մասին, որ մահմետական  
կրօնքը ընդունած էր, —

«Ապշեցուցիչ բան է տեսնել թէ Մողոլ կայսր  
մը ճիգ կը թափէ Սաչակրական ոգին հրահրե-  
լու Քրիստոնեայ աշխարհի իշխաններուն մէջ:  
Ապշեցուցիչ բան է տեսնել թէ Յաքսարտէս եւ  
Ոքսոս դետերու եղերքներէն եկած բարբարոս-  
ներ կը կանգնին Գողգոթայի եւ Սիօնի վրայ,  
սպասելով որ Փրանսայի, Գերմանիոյ և Իտա-  
լիոյ զօրքերը դան՝ քրիստոնէութեան թշնամի-  
ներուն դէմ կռուելու համար»:

Թէ, Ղազան Խան, թէ եւ մահմետականու-  
թեան դարձած, իրապէս քաղաքական շարժա-  
ռիթներով միայն կը գործէր՝ կրնայ հաստատ-  
ուիլ հետեւեալ տողերէն ալ, որ իրեն ուղղը-  
ռած էին Եգիպտոսի Նասրը Սուլթանին կող-  
մէ, — «Աստուծոյ առաքեալը ըսած է թէ նա՛ է  
Միւսլիմ որուն ձեռքերը եւ լեզուն ոչ երբեք կը

վնասեն ուրիշներուն : Դուն շատ խիստ կերպով վարուեցար Միւսլիմ բանտարկեալներուն հետ, եւ զանոնք յանձնեցիր Թագաւորին ու Հայերուն(\*) : Ասիկա հակառակ է բարեւրրտութեան ոգիին, զոր ունենալ կը յաւակնիս դուն :»

Անշուշտ Հայերը խորապէս կը վաւիաքէին որ համաձայնութիւն մը ստեղծուի Թաթարներուն եւ Եւրոպական պետութիւններուն միջեւ, եւ լուրջ ջանքեր ալ կատարեցին այդ գործին յաջողութեան համար(\*\*) : Սմբատ, Հայաստանի Գունդստապլը կամ Սպարապետը, եւ իրմէ վերջ՝ նոյն ինքն Հեթում Ա. Թագաւորը, անձամբ դիմեցին Սանին արքունիքը, այն մըտքով որ Հայերուն համար անոր բարեկամութիւնը ձեռք բերեն, եւ ապագայ Եւրոպ-Թաթարա-

---

(\*) Արաբ պատմագիրներ յանախ կը գործածեն Թագաւոր բառը, (Թէֆէվիւր կամ Թէֆֆուր ձեւին տակ) : Այս տեղ Սուլթան Նասրը կ'ակնարկէ Հեթում Բ.ին որ Դամասկոս եւ Երուսաղէմ արշաւած էր 1300ին, իբրեւ գինակից Ղազանի :

(\*\*) Ասորի քահանայ մը, Սիմոն, 1243ին Սիս եկաւ իբրեւ դեսպան Թաթարաց իսանին :

Ապաղա իսան, 1269-ին կը գրէր Եւրոպայի տէրութիւններուն, խնդրելով որ անոնք իրենց բանակները համախմբեն Սիս :

կան դաշնակցութեան մը հիմերը հաստատեն (\*):

Հեթոմին եւ իր յաջորդներուն քաղաքականութիւնը թէեւ մեծապէս նպաստեց Ասիոյ Քրիստոնէից ապահովութեան եւ Հայկական Կիլիկիոյ պաշտպանութեան գործերուն՝ չունեցաւ սակայն մշտական յաջողութիւն: Սուրիոյ եւ Պաղեստինի կողմերը կատարուած շարք մը յաղթական արշաւանքներէ վերջ, որոնց մասնակցած էին Հայ բանակները, Լեւոն Բ. ի եւ Հե-

---

(\*) Թանկագին վաւերաթուղթ մըն է այն նամակը գոր Սմբատ ուղղած է իր քրոջ, Կիպրոսի թագաւորին ամուսին: Նամակը գրուած է Սմրդանտէն, եւ կը կրէ 1248 Փետրուար 6 թուականը: Հետեւեալն է անոր հասցէն.—

«A tres haut et puissant homme Monseigneur Henry par la grace de Die roy de Chipre et a sa chiere suer Emmeline la royne, et a noble homme Jehan de Hibelin son frere, li Connoitables de Ermenie salut et amour.»

Ադկէ կէս դար ետքը, 1301ին, Հեթում Կոնիկոսցի, կրօնաւոր իշխանը, անձամբ ընծայեց Կղեմէս Ե. Պապին, իր հեղինակած մէկ գիրքը, Թաթարներու վրայ, որուն տիտղոսն էր,— «Le livre de la fleur des histoires de la terre d'orient. Le quel livre Hayton Seigneur de Core, cousin germain du roy de Armenie compilla.»

Թում Բ.ի ներքեւ (1277ին եւ 1300ին) Մողոլ-  
 Թաթարները հետզհետէ տկարացան, եւ Հայե-  
 րով հետաքրքրուելէ դադրեցան: Եւրոպական  
 ազգերն ալ, միւս կողմէ, միշտ փոխադարձ նա-  
 խանձուլթիւններով պատակտուած, եւ բարոյա-  
 կան պարտականութիւններէ աւելի շահախընդ-  
 րական նկատումներէ առաջնորդուած՝ գրեթէ  
 բան մը չըրին ի պատասխան Հայաստանի տըխ-  
 րագին աղաղակներուն: Եւ մինչ այդ տարա-  
 բախտ աշխարհին եկեղեցիներն ու վանքերը  
 հրդեհի եւ աւերումի կը մատնուէին, եւ մինչ  
 Քրիստոնեայ արիւնը հեղեղի պէս կը հոսէր՝  
 Լատին միսիոնարները եռանդով կը ջանային  
 Հայ եկեղեցին մաքրելու իր հերետիկոսական  
 վարդապետութիւններէն եւ դաւանութիւննե-  
 րէն: Երեսուն հազար Փլօրինի (իբր 72,000 տո-  
 լարի) դումար մը, որ 1334ին, Եգիպտական կոր-  
 ծանարար արշաւանքէ մը վերջը Յովհաննէս ԻԲ.  
 Պապին կողմէ նպաստ դրկուած էր Ալասի վերա-  
 շինութեան համար՝ պահ մը վար դրուեցաւ Պա-  
 պական Նուիրակին մօտը, մինչև որ ինչ ինչ  
 աստուածաբանական վէճեր կարդադրուեցան:

Հայերը կրնային, այդ վերջին ժամուն իսկ,  
 ձեռք բերել իրենց երկրին ապահովութիւնը,  
 եթէ հաւանէին խզել իրենց յարաբերութիւնը  
 Արեւմտեան աշխարհին հետ, եւ «դադրիլ դես-  
 պան կամ նամակ դրկելէ Հռոմի Քահանայա-  
 պետին», ինչպէս որ կը տրամադրուէր՝ Սուլ-  
 թան Նասրրի կողմէ Լեւոն Դ. Թաղաւորին վը-

րայ պարտադրուած դաշնադրի մը մէջ (\*):  
Բայց այդ բանը անկարելի էր: Ինչ որ ալ ե-  
ղած ըլլար իրենց աշխարհադրական դիրքին եւ  
քաղաքական առանձնութեան պահանջումը՝  
Հայերը կը սնուցանէին անընկճելի հաւատար-  
մութիւն մը Քրիստոնէական խոչալներու եւ ա-  
ւանդութիւններու համար, ուստի շարունակե-  
ցին պայքարը, մինչեւ այն ատեն որ արիւնա-  
քամ ե բոլորովին ուժասպառ՝ ինկան պատուոյ  
դաշտին վրայ:

---


(\*) Անգլիոյ Եղուարդ Ա. թագաւորը 1317-  
ին ընդունեց Օշին թագաւորի մասնաւոր դես-  
պանները — Պաղտին Նկերցին, եւ Գրագարկի  
աբբահայր Թորոսը:

Ադկէ քիչ վերջ Եւրոպա դրկուեցան Հայ-  
կական դատը պաշտպանելու, Կապանի Յակոբ  
Եպիսկոպոսը եւ իր թարգմանը Պարոն Գրիգոր:

Ֆրանսայի, Նաւարրայի, Արակոնի եւ Պո-  
հեմիայի թագաւորները 1333ին խոստացած էին  
միասին արշաւանք մը կատարելու Արեւելք,  
Հայոց օգնութեան համար:

Անգլիոյ Եղուարդ Գ. թագաւորը 1342ին  
գրեց Լեոն Գ.ին, իր ցաւակցութիւնը յայտ-  
նելով եւ օգնութիւնը խոստանալով:

Ֆրանսայի Ֆիլիք թագաւորը իր գանձա-  
պահին հրամայեց որ նպաստի համար 10,000  
ֆլօրին յատկացուի Հայաստանի, երեք տար-  
ուան մէջ մաս մաս վճարելի:



Անագարբայի ձերդը եւ Աւերակները

Անոնք որ նիւթը ուսումնասիրած են՝ կ'ընդունին թէ անկախ Հայաստանի պատմութեան այս վերջին դրուագը լի է վիպերգական զէպքերով :

Անոր տեւողութիւնը, թէեւ հազիւ 300 տարի, աւելի երկար էր քան իրեն ժամանակակից դրացի պետութիւններունը : Կիպրոս կղզիի թագաւորութիւնը միայն անոր չափի դոյութիւն ունեցաւ (\*): Բայց համեմատաբար կարճատեւ դոյութիւն մ'ունենալով հանդերձ՝ Կիլիկիոյ հայկական թագաւորութիւնը, այդ

(\*) Ժամանակակից պետութիւններուն տեւողութեան շրջանները ասոնք են.—

Եդեսիոյ ֆրանգ իշխանապետութիւնը	տեւեց	46 տարի :
Երուսաղէմի լատին թագաւորութիւնը՝	88	» :
Սուրիական Տրիպոլսոյ կոմսութիւնը՝	180	» :
Անտիոքի իշխանապետութիւնը՝	169	» :
Ակրոնի (Ա. քեայի) կոմսութիւնը՝	187	» :
Ռումի սելնուգեան սուլթանութիւնը՝	213	» :
Կ. Պօլսոյ լատին կայսրութիւնը՝	57	» :
Տրապիզոնի յոյն կայսրութիւնը՝	258	» :
Կիպրոսի թագաւորութիւնը՝	295	» :



քրիստոնէական կղզեակը իսլամական փոթոր-  
 կակոծ ուկէտնին մէջտեղ, տեսարանը հան-  
 դիսացաւ բազմաթիւ արիական եւ ասպետական  
 գործունէութեանց : Ճգնաժամը հասած էր  
 Տասնըչորրորդ դարու երկրորդ կիսուն, երբ  
 Սուլթան Աշրաֆ Գալափունի ահեղ զօրութեան  
 առջեւ իրարու ետեւէ ինկան Ակրոն, Տիւրոս  
 եւ Տրիպոլիս, ու բան չը մնաց Արեւելքի եւրո-  
 պական տէրութեանց հետքերէն : Այն ատեն  
 Հայերուն կը մնար՝ միս-մինակ դիմագրաւել  
 կացութեան : Եւ անոնք լիովին արդարացուցին  
 իրենց համբաւը իբրեւ լաւ պատերազմիկներ :  
 Զոհողութեան այդ ժամուն մէջ անոնք փայ-  
 լեցան դերազանցօրէն հերոսական քաջագոր-  
 ծութիւններով, ու այդպէս քիչ մ'ալ երկարե-  
 ցին իրենց ազգային անկախութիւնը : Այասի  
 հայ պահակազունդը, 600 հոգիէ բաղկացած,  
 երկու անգամ ետ մղեց Սուլթան Նասրի բա-  
 նակը : Ուրիշ ատեն մը՝ 200 հայ ռազմիկներ  
 թակարդի մէջ առին 18,000 մահմետական հեծ-  
 եալներ, եւ անոնց 6000-ը զարկին : Այդ օրերուն  
 մէջ էր որ Լիպարիտի անունը ահ ու սարսափ  
 ձգեց թիւրք եւ թիւրքմէն ասպատակներուն  
 վրայ : այդ օրերուն մէջ էր որ դիւցազնուհին  
 Զարմանդուխտ իր ձեռքովն իսկ սարաննեց եր-  
 կու թիւրք զօրապետներ, — էօմէրը՝ Ատանայի  
 դաշտին մէջ, ու Ալին՝ Սիսի դաշտին մէջ :

Հարկ չեմ տեսներ աւելի մանրամասնու-  
 թեանց, ցոյց տալու համար Հայոց ծառա-

յուլթիւնը քրիստոնէական քաղաքակրթութեան դատին, անոնց անխախտ հաւատարմութիւնը Արեւմտեան Պետութիւններուն, եւ անոնց անընկճելի հաստատակամութիւնը՝ մինչեւ վերջին շունչ պաշտպանելու իրենց հայրենիքին անկախութիւնը: Այդ ժամանակաշրջանի այլազան եւ սրտազրաւ դէպքերը հետեւեալ եզրակացութեամբ ամփոփուած են Վիքդօր Լանկլուայի գրչին ներքեւ. «Բազմաթիւ են այն դէպքերը, այդ փայլուն յիշատակները», կ'ըսէ Լանկլուա, «ու եթէ քիչ մը հետեւինք հայկական յաղթութեանց ընթացքին եւ անոր յաջորդական յառաջդիմութեան, եթէ քիչ մը քրննենք երկրին ազնուականութեան եւ կղերականութեան կազմակերպութիւնը, եւ ուսումնասիրենք Հայաստանի յարաբերութիւնները արեւմտեան ազգերու հետ, ու անոր մղած պատերազմները իսլամներուն դէմ՝ այն ատեն պիտի տեսնենք որ . . . այս երկրի պատմական վաւերագրութեանց մէջ փառաւոր անցեալի մը յիշատակները կան»:

Եւ սակայն սոսկ «փառաւոր անցեալ»ին ուժովը չէ որ Հայերը սեփականութեան իրաւունք ունին այդ երկրամասին վրայ: Սիսի թագաւորութեան անկումէն վերջն ալ Հայերը շարունակ ամենէն կենսական տարրը կը կազմէին իրենց նուաճեալ աշխարհին: Եգիպտացիներու տիրապետութիւնը ո՛չ ամբողջական եղաւ, ո՛չ ալ տեւական: Վենետացիները դարու մը չափ


եւս տէր մնացին, արեւմտեան ծովեզերքին, մինչ բարձրաւանդակներուն վրայ խել մը անկախ համայնքներ երեւան եկան: Օսմանցի թիւրքերը Կիլիկիա մտան 1487-ին, Սուլթան Պայազիտի ներքեւ, բայց չկրցան ամուր հիմքոնել հոն. անոնց դէմ դլուխ բարձրացուցին Ռամազանները, Զիւլդատրեանները, Գարամանները եւ Եգիպտացիները: Մինչեւ Տասնըիններորդ դարու կէսը՝ օսմանեան տիրապետութիւնը դեռ անկայուն վիճակի մէջ էր այդ կողմերը: Տատա պէյ անուն մէկը կը տիրէր Բայասի մէջ, Ալէքսանտրէզի հիւսիսակողմը, 1825-ին. Եգիպտոսի Իպրահիմ փաշան Ատանան գրաւեր էր 1840-ին. Սարխանտ-Օղլու կ'իջխէր Սիսի եւ Մարաշի մէջ, 1859-ին, եւ Փօղան-Օղլու գերագօր էր մինչեւ 1866:

Կիլիկիոյ աննուաճ կեդրոններուն մէջ կարեւոր տեղ մը կը բռնէր հայկական Զէյթուն գաւառակը, որուն կէս-ինքնավարական իրաւունքները երաշխաւորուեցան Վեց Պետութեանց կողմէ, 1895-ին, թիւրք զօրքերուն վրայ Զէյթունցիներուն տարած յաղթանակէն վերջ: Մինչեւ մէկ աստիճան անկախ էին նաեւ Սելւերան, ըստ թրքաց կեւիւնը Տաղըի Հայերը:

Երկրին խռովայոյզ կացութեան, եւ իսլամական մտրեւանդութեան պարբերական արութկոսմաներուն հակառակ՝ Հայերը մինչեւ վերջերս գերակշիռ մնացած էին Կիլիկիոյ արեւելեան մասին մէջ, — թուով 200,000-է ոչ

պակաս : Իր ամբողջութեանը մէջ՝ Կիլիկիոյ  
 բնակիչներուն մեծամասնութիւնը կը բաղկա-  
 նայ մահմետականներէ, բայց ասոնք կը ներ-  
 կայացնեն այլազանութիւն մը տարրերու որոնք  
 օտար են իրարու համար, ինչպէս՝ Թիւրքմէն-  
 ներ, Թիւրքեր, Քիւրտեր, Չէրքէզներ, Արաբ-  
 ներ, Պարսիկներ, եւն. : Թիւրքմէնները, որ  
 մահմետական բնակչութեան մէջ ամենէն խո-  
 շոր թիւը կը կազմեն, մեծ մասամբ վաչկատուն  
 ցեղեր են, — Վարչագներ, Եիւրիւքներ, Աֆ-  
 շարներ : Պօզան եւ Հայուկ ցեղերը հայկական  
 ծագում ունին : Բաւական մեծ թուով Թիւրք  
 ընտանիքներ կան հայ մականուններով . ա-  
 տոնք կը սերին հայ նախնիքներէ որոնք իսլա-  
 մացած էին բռնութեան ներքեւ : Թիւրքերու  
 առտնին կեանքին մէջ դործածուած շատ մը  
 հայերէն բառերն ալ ասպացոյց են այդ իրողու-  
 թեան : Թիւրք կիներու յաճախադէպ սովորու-  
 թիւնն է՝ իրենց հիւանդ երախաները Հայոց  
 Եկեղեցին տանիլ եւ անոնց դիտուն վրայ Աւե-  
 տարան կարդացնել քահանային, որպէս զի  
 բժշկութիւն դտնեն : Անոնք նոյնպէս ողորմու-  
 թիւն (ընծայ) կը բերեն Հայոց Եկեղեցին,  
 իրենց նեղութիւններուն մէջ՝ հաւատացեալնե-  
 րուն աղօթքը խնդրելու համար :

Թիւրքիոյ եղեռնագործ կառավարութիւնը,  
 այս վերջին տարիներս չը բաւականացաւ Հա-  
 յերը տեղահանելով եւ ջարդելով, հասլա նաեւ  
 փորձեց իսպառ ջնջել Հայերու անցեալ դործու-



Լեւոն Դ. Թագաւոր Դատաստանի մէջ

նէութեանց բոլոր ապացոյցները : Այդ կառա-  
վարութիւնը կործանել տուաւ կաթողիկոսա-  
կան գահը եւ կողոպտել տուաւ գանձերը Սիսի  
վանքին , որ կը բարձրանայ արքունի պալատին  
աւերակներուն վրայ : Անիկա սրբապղծել տուաւ  
հայ թագաւորներու եւ թագուհիներու գերեզ-  
մանները եւ քանդել տուաւ իշխանական հին  
ապարանքներու եւ կայարաններու մնացորդ-  
ները : Իրաւ է որ Թիւրքերը յաջողեցան փճա-  
ցնելու շատ մը թանկագին կոթողները անցեալ  
դարերուն , բայց եւ այնպէս անկորնչելի են  
յիշատակարանները այդ աշխարհին , «Փոքր  
Հայաստանի փառաւոր քրիստոնեայ թագաւո-  
րութեան» — ինչպէս կ'անուանէ Կիւսդավ  
Շլէօնպէոժէ : Հոն դեռ կանգուն կը մնան բազ-  
մաթիւ դղեակներ եւ ամրոցներ , որոնց ուղմա-  
կոծեալ բարձրաբերձ կողերուն հայերէն արձա-  
նագրութիւններուն չէ կրցած հասնիլ Թիւրքին  
աւերիչ ձեռքը . հոն դեռ աչքի կը զարնեն եկե-  
ղեցիի շէնքեր , կիսովին աւերուած կամ մղկիթի  
վերածուած , որոնց կամարներուն ներքեւ՝ ի-  
րենց բազմազգի ուկնդիրները կը հմայէին պեր-  
ճարան քարոզիչներ , (Տարսոնի սրբասուն Արք-  
եպիսկոպոս Ներսէս Լամբրոնացիին նման) :  
Հոն դեռ կը տեսնուին վանքեր , Տաւրոսի եւ Ա-  
մանոսի կողերուն վրայ թառած , եւ կամ ա-  
նոնց կածաններուն մէջ ծածկուած , ուր հայ  
կրօնաւորը բարեպաշտօրէն կ'աղօթէր քրիստոնե-  
այ բանակներուն յաղթութեան համար , կամ

Ժրաջանօրէն կ'ընդօրինակէր Աստուածաշունչը  
կամ Հին Հայրերու դրօշը:

Ատոնցմէ դատ՝ Հնագէտներու Հաւաքածոյ-  
ներուն մէջ կը գտնենք ոսկի ու արծաթ դրամ-  
ներ, Հայ թագաւորներու եւ թագուհիներու ա-  
նուններով, եւ եւրոպական թանգարաններու եւ  
գիււանատուններու մէջ՝ Սիսի արքունի դար-  
պասէն ելած դաշնադիրներ եւ Հրովարտակ-  
ներ (\*): Ու վերջապէս մեր առջեւ ունինք Մի-  
ջին դարերու պատմագիրներուն վկայութիւնը  
թէ այդ երկրամասը, երբեմն կեդրոն Հայ  
կենսունակութեան եւ դործունէութեան, եւ  
միշտ շաղախուած Հայ Հերոսներու եւ մարտի-

---

(\*) Այդ դրամներուն պատկերները եւ գրու-  
թիւնները իրարմէ կը տարբերին: Ատոնց ո-  
մանց վրայ կը տեսնուի թագաւորին պատկերը,  
կամ կանգուն առիւծ մը՝ ձեռքը խաչ բռնած:  
Հակառակ կողմը, թագաւորին անունէն վերջ  
դրուումը եւ այս բաները, — «Կարողութեամ-  
բըն Աստուծոյ, թագաւոր»: Կամ՝ «Շինեալ ի  
քաղաքն ի Սիս. վասն փառացն Աստուծոյ»:

Արծաթ դրամի մը վրայ կը տեսնուին Հե-  
թում Ա. թագաւորին եւ Զապէլ թագուհիին  
պատկերները: Ամենէն շատ գործածական էր  
թագաւորինը, զոր եւրոպացիք կը կոչէին թա-  
գորին կամ թագգօլինօ, իսկ եգիպտացիք՝ թէք-  
վուրիչէ: Ասիկա արծաթ դրամ մըն էր, ամե-  
րիկեան 12 սէնթի արժէքով, մօտաւորապէս:

րոսներու արիւնով, Եւրոպացիին ծանօթ էր Արմէնի անունով, Յոյնին ծանօթ էր Արմէնո-Քիլիքիա անունով, Արաբին՝ Պիլատ-էլ-էրմէն անունով, եւ նոյն ինքն Թիւրքին՝ էրմէնիսթան անունով . . . :

Չե՞նք կրնար յուսալ թէ իբրեւ գերագոյն չաղթանակը արդարութեան դատին, եւ իբրեւ մէկ հոյակապ արդիւնքը Խաղաղութեան Վեհաժողովին, Հայկական դրօշը անգամ մըն ալ պիտի ծածանի վերեւը հայկական նաւերուն, որոնք դուրս պիտի դան երբեմնի Հայկական Ծովէն (Mare Armeniae) :





Կ Գրութեան արհեստը

Հեթում Ա. Թագաւորի Ստորագրութիւնը



# ՀԱՅՈՑ Մ Ե Ծ ՆԱԻԱՀԱՆԳԻՍՏԸ

## «ՊԱՆԾԱԼԻՆ ԱՅԱՍ»

Խոսմբ մը ռազմիկներու ձեռքով ազգային տէրութեան մը հիմնարկութիւնը մայր-հայրենիքէն դուրս, ինչպէս ըրին Հայերը Կիլիկիոյ մէջ, աշխարհիս քաղաքական հորիզոնին հազուադէպ երեւոյթներէն մին է: Իսկ ինչ որ առաւելապէս դարձանք կը պատճառէ՝ այդ տէրութեան կորովի դիմադրութիւնն է, համայնաքանդ ցնցումներու առջեւ:

Կոռումզովի բարձունքին վրայ Ռուբինեան ազատ դրօշին ծածանումէն 18 տարի վերջն էր որ Եւրոպացի Սաչակիրները մեծամբոխ բանակներով եկան անցան նոր Հայաստանի սահմաններէն դէպի հարաւ, ու հետզհետէ հիմնեցին Միջագետքի եւ Սուրիոյ լատին իշխանութիւնները: Արեւմուտքի ամբողջ Քրիստոնէութիւնը կանգնած էր անոնց ետին. Հռոմի Քահանայապետին հզօր ձայնը կը խրախուսէր զանոնք. թագակիր զօրապետներ ու քաջատոհմիկ ասպետներ կ'առաջնորդէին անոնց, — եւ սակայն Իսլամական խորշակը շուտ հասաւ մահացնելու ամէնքն ալ: Սիս մայրաքա-

դաքի դռներուն Աշրդթիմուրի առջեւ բացուե-  
լէն 80 տարի առաջ Լատին իշխանութիւնն ան-  
հետացած էր ամբողջ Արեւելքէն :

Ինչպէ՞ս եղաւ որ Կիլիկեան աշխարհի Հա-  
յութիւնն, իր միայնակ ուժովն ու սահմանա-  
փակ թուովը կարողացաւ արքունի դահը կան-  
դուն պահել այնչափ ատեն, յաջողապէս վանե-  
լով Սելճուղեաններու, էյուլաբեաններու, Մէմ-  
լուքեաններու եւ այլոց կատաղի յարձակում-  
ները :

Հայ զինուորին քաջութիւնն ու շարքաչու-  
թիւնը, Տաւրոսի եւ Ամանոսի պատնէշներուն  
ամբողջութիւնը, ինչպէս նաեւ միջազգային քա-  
ղաքականութեան ինչ ինչ անակնկալները մեծ  
դեր կատարեցին անշուշտ, բայց եւ այնպէս  
կար ուրիշ տարր մը, որ յատկապէս, եւ առա-  
ւելապէս նպաստեց ազդային անկախութեան  
պահպանումին : Տնտեսական ոյժն էր անիկա,  
դրամն էր, որ այսօր ալ կը ճանչցուի իբրեւ  
Չիղը պատերազմին :

Ռ՞ւսկից էր այդ դրամը, ո՞ւր էր այդ ոյ-  
ժին աղբիւրը :— Հարցումին պատասխանը կը  
գտնենք՝ օտարազգի հեղինակաւոր վկայի մը  
սա պարբերութեանը մէջ, — «Կարելի չպիտի ըլ-  
լայ բացատրել թէ այս երկիրը (Հայկական  
Կիլիկիա) ինչպէս յաջողեցաւ ա՛յնչափ արշա-  
ւանաց դիմադրելու, եւ ամենազարհուրելի  
դժբախտութեանց մատնուելէ վերջ նորէն ոտ-  
քի կանգնելու, եթէ չը մտաբերուի որ վաճա-

ռականութիւնը անսպառ հարստութիւն կը թափէր հոն\*» :

Եւ իրողութիւնն այն է թէ Հայկական Կիլիկիա, Անտոն Մեծագործի հեռատես քաղաքականութեամբը Եւրոպական դրամադլիսին առջև բացուած՝ ԺԳ դարու սկիզբէն դիտաւոր հըրապարակը դարձաւ միջադդային վաճառականութեան : Եզիպտոսի սուլթաններուն դէմ Արեւմտեան ազդերու մղած բռնաշունչ ոգորումներուն միջոցին՝ եկաւ Ժամանակ մը երբ քըրիստոնեայ վաճառականները Պապական կոնդակով արգիլուեցան մահմետական նաւահանդիստ մը ոտք կոխելէ : Ատո՛վ մանաւանդ օգտուեցաւ Կիլիկիա, եւ արագօրէն ծաղկեցաւ, բարգաւաճեցաւ, հարստացաւ :

Կիլիկիոյ երկարաճիղ ծովափունքին վրայ տասնէն աւելի բանուկ նաւահանդիստներ կային վաղուց\*\* : Իսկ Հայկական իշխանութեան ատեն ատոնց մէջ ամենէն վայլունն եղաւ Ա-


---

\* Giuseppe Canstrini, իտալացի պատմագիր :

\*\* Այդ նաւահանգիստներն էին՝ Ալայա (Կալօնօրոս), Անամոր, Քավալիէր (Բօրթօ Բըրօվանցալէ), Զեփիւռիոն (Մերսինի կից), Այաս (Եգէաս), Բօրթէլլա, Պօնէլ, Անտիոֆ Կըրաֆեան, Քելենտրիա, Կոռիկոս, Մալլոս (Գարաթաշ), Քանամելլա (Ճկեր-Բայաս), Ալեֆանտրէթ (Իսֆէնտէրուն) :

յաս , « Հայոց թագաւորին նաւահանգիտը » ,  
ինչպէս կ'ըսէին Եւրոպացիք : Այաս , ըստ Յու-  
նաց Եգէաս , որ Հռոմայեցւոց ներքեւ ազատ  
քաղաքի պատիւը կը վայելէր՝ կը գտնուի հի-  
մակուան Եռամուրթալըգ աւանէն դէպի արե-  
ւելք , Հայոց Ծով կոչուած ապահով խորշին  
մէջ , Միջերկրականի արեւելեան հիւսիսային  
անկիւնը : Ներկայ պատերազմէն առաջ՝ անդ-  
լիական նաւատորմիդ մը սովորաբար հոն կը  
խարսխէր ամբողջ ձմրան եղանակին : Քրիս-  
տոնէութեան առաջին դարերուն մէջ՝ Կիլիկիոյ  
երկրորդ արքեպիսկոպոսին աթոռանիստ քա-  
ղաքն էր Այաս : Ժամանակ մը մոռացութեան  
մատնուելէ վերջ ժԳ . դարուն սկիզբները յան-  
կարծ ներկայացաւ ամբողջ աշխարհի ուշադը-  
րութեան , իբրեւ « սիրտը » Հայկական թագաւո-  
րութեան , որուն գլուխը Միսն էր բնականա-  
բար : Այն պահուն քսանէ ավելի օտար դրօ-  
շակներ կը պարզուէին անոր ծովափը ծածկող  
նաւերուն վերեւ : Նաւամատոյցին վրայ կը  
վիտար բաղմալեղու եւ այլատարազ ամբոխ  
մը , Եւրոպայի եւ Ասիոյ ամեն կողմերէն : Հոն  
դէմ դէմի կուզային նաւաւարն ու ուղտապա-  
նը , վաճառականն ու մուրացիկը , աղնուականն  
ու սորուկը , կրօնաւորն ու զօրականը :

Այաս պաշտպանուած էր երկու բերդերով ,  
մին ծովային , միւսը ցամաքային : Հոն հետըզ-  
հետէ հաստատուեցան Եւրոպական այլ եւ այլ  
ազգի գաղութներ , — Իտալացի , Սպանիացի ,



Զիարտը Սիսուանեան Թագաւորութեան

Ֆրանսացի, Ալաման, որոնց իւրաքանչիւրն  
 Հայոց թագաւորին հրամանադրով ունեցաւ իր  
 առանձին թաղը, եկեղեցին, մթերանոցը եւ  
 փնդուկը (խանը) : Ամեն մէկ հասարակու-  
 թիւն ունէր իր հիւպատոսը, որ կը կոչուէր  
 Գունց կամ Պայլ (Գոնցուլոս – Պայլեօզ) : Ա-  
 յասի մեծ հրապարակին վրայ, ցամաքային  
 բերդին դիմացը, ընդարձակ տեղ կը գրաւէր  
 Արքունի ապարանք կոչուած շրջանակը, որ կը  
 բաղկանար Դարսլասէն, դիւանատունէն եւ դա-  
 տարանէն : Ամեն մէկ պաշտօնարան ունէր իր  
 սրտը, քարտուղարները եւ թարգմանները :  
 Հոն հաստատուած կար նաեւ Լատիներէնի վար-  
 ժարան մը, Իտալացի ուսուցիչներով : (Սսոյ  
 արքունիքէն տրուած ծանօթ պարզեւագիտները  
 հայերէն եւ ֆրանսերէն լեզուներով են) :

Այսպիսի ամենէն կարեւոր պաշտօնարանն էր  
 Բաժտունը, ըստ Եւրոպացւոց Բագիտոնիոնւմ\* ,  
 որուն վերակացուն կամ հաշուակալը կը կոչ-  
 ուէր Պրօֆսիւնս, յունական տիտղոսով, եւ որ  
 գրեթէ գանձային նախարարն էր Հայոց թա-  
 գաւորին : Բաժտունին մէջ կը գանձուէին նե-  
 րածեայ եւ արտածեալ ապրանքներուն մաքսե-  
 րը : Կատարուած դործաւնութեանց վրայ  
 մասնակի դադաւիար տալու համար յիշեմ որ  
 Վենետական հիւպատոս մը 1,000 տոլարի հա-  
 ւասարող գումար ստացած էր իբրեւ տուրք,

---

\* Pasidonium .



Վենետական հոլատակներու մէկ տարուան ներածութենէն, կէս առ 100 հաշուով: Ասիկա կը նշանակէ՝ մէկ տարուան մէջ 200,000 տոլարի մօտ գործողութիւն մը, — ինչ որ դրամի այն օրուան արժէքով կը համարուի իբր 1,400,000 տոլար:

Եւրոպայէն Այաս կը ներածուէին՝ մետաքսեղէն, բամբակեղէն, ցիսի (սօֆ), ոսկեճամուկ դիպակ, շաքար, խունկ, օճառ, ձէթ, դինի, չուխա, պղնձեղէն, կլայեկ, ոսկի, արծաթ, լեղակ, սնդիկ, բուստ, համեմունք, ատաղձ, դէնք, նաւ, նաւային կաղմածք, եւն. : Իսկ արտածութեան նիւթերն էին՝ արեւելեան համեմունք, շաքար, որդան փայտ, գնջըպիլ, բուրդ, պղպեղ, այծի ատն, ասուեղէնք, ցունցք (քուրջ), բամբակ, քիթան, երկաթ, պղղինձ, պաղլեղ, ձի, էշ, ջորի, արջառ, մուշտակ, գոմէշի եւ պախրէի մորթ, գոմէշի եղջիւր, ցորեն, դարի, չամիչ, դինի, քաղցրեղէն, հաւեղէն, հաւկիթ, փայտ, չուան, խար, մետաքս, աղ, եւն. \*\* :

Այասի մէջ Եւրոպացիք կը դնէին նաեւ դերիներ: Այդ միջոցին դերեւվաճառութեան գրլխաւոր կեդրոնն էր Եգիպտոս, ու այդ գործով կը դրադէին Վենետացիք, Փրանսացիք եւ Քաթալանք (Սպանիացի): Բայց հրատարակին: բուն հայթայթիչներն էին Ճենովացիք: Ասոնք

---

\*\* Տես Սիսուան, Հ. ՂԵՒՆԴ ԱԼԻՉԱՆԻ:

1288ին Լեւոն Գ.էն արտօնուեցան Հայոց երկրէն դերի արտածելու, պայմանով որ քրիստոնեայ դերի չը ծախեն մահմետականի:— «Թէ (ճընուվեգ վանկներն) քրիստոնէ ծառայք գնեն նայ երդնուն որ Տաճկի չը ծախեն ու ոչ հայնց մարդոյ որ կամենայ Տաճկի ծախել:» Յայտնի է սակայն թէ, Եւրոպացի վաճառականներէն շատեր, որ Պապական արգելքին հակառակ մահմետականաց հետ առեւտուր կը կատարէին՝ չը պիտի յարգէին Հայոց թագաւորէն պարտադրուած պայմանը\* :

---

\* Եգիպտոսի մէջ գերիներու գինը կը տարբերէր իրենց պատկանած ցեղին համեմատ:

Թաթար տղայ մը կ'արժէր 130-140 վենետական տուկադ:

Չէրֆէս տղայ մը՝ 110-120 տուկադ,

Յոյն տղայ մը՝ 90 տուկադ,

Ալպանիացի, Սլաւ, կամ Սերվիացի տղայ մը՝ 70-80 տուկադ:

Տուկադ մը հաւասար է մեր դրամով \$1.40ի:

Գերեվանառուքիւնը արտօնուած էր Բիւզանդական կայսրութեան ներքեւ ալ: Յուստինիանոսի Օրինագրքին մէջ կը տեսնենք հետեւեալ գիները:

Օտարազգիներու ձեռքով ներածուած կամ արտածուած ապրանքներէն՝ արքունի դանձը կը ստանայ 4 առ 100 մաքս (թանթալոնիա) որ վերջերը զեղչուեցաւ նպաստաւորեալ ազգերու համար : Վենետացիք եւ Ճենովացիք, որ ծովային վաճառականութեան մէջ բունն մրցակիցներ էին՝ իրարու ետեւէ հասան Կիլիկիա, եւ Հայ թաղաւորներու տրամադրութենէն օգտուելով՝ յաջողեցան մաքսի սակը իջեցնելու մինչեւ 1 առ 100 : Նոյնպէս իրաւունք ստացան որ թեթեւ մաքսով վաճառք փոխադրեն Հայոց սահմանակից մահմետական երկիրները : Վենետացիք արտօնուեցան առանց մաքսի ներմուծելու ոսկի կամ արծաթ ձոյլեր, պայմանով որ ասոնք դրամի վերածուէին Սսոյ արքունի փողերանոցին մէջ : Ճենովացիք, փոխադրիչ վաճառականութենէ դատ, զոր կը կատարէին Այասի եւ ուրիշ նաւահանդիստներու միջեւ, ըլլայ հայկական կամ օտար, թոյլտրուեցան հաստատուելու երկրին ներսերն ալ, այդի . ձի-

---

Տար տարեկանէն վար մանչ կամ աղջիկ ծառայ մը կ'արժէր 10 ոսկի . գրագիր մը՝ 50 ոսկի . դայեակ մը, կամ բժիշկ մը՝ 60 ոսկի ևն .

«Երուսաղէմի Անսիզ»ներուն (Լատին թագաւորութեան Օրինագրքին) համեմատ՝ մէկ գերի համարժէք է մէկ բազէի կամ չորս եզի . երեք գերի համարժէք են մէկ ձիու :

թենի եւ թթենի մշակելու, եւ մանրավաճառութեամբ պարասելու\*\* :

Նուազագոյն մաքսի շնորհը վայելեցին նաեւ Սիկիլիացիք, 1330էն սկսած, երբ Լեւոն Գ. ամուսնացաւ անոնց թագաւորին, Փրետերիքի, աղջկան հետ : Այս մասին Սիկիլիացիներու շնորհուած պարգեւագրին մէջ կը կարդանք հետեւեալ տողերը, —


«...Նայ վասն պայծառ եւ երեւելի իշխանին՝ շնորհաւքն Ասատուծոյ թագաւորին եւ մեր պանծալի հաւրն ըռէ (թագաւոր) Ֆարկայ սիրոյն եւ հարկիցն՝ ընդունեցաք զիւրեանց խնդրուածքն, պարտ եւ արժան համարեցաք առնել իւրեանց շնորհս ըստ յուսոյն իւրեանց զոր խնդրեցին ի մերոյ թագաւորութենէս, եւ պարգեւեցաք ամէն Սիծիլիանոցն, որք են Սիծիլեանք եւ Սիծիլիանի որդիք, որք են եւ որդալոյ են, որ լնին սիրածոյ, հարկեւորածոյ, պահած ու նախախնամած, իւրեանք իւրեանց անձերովն ու ըռըգակովն...» :

Առանձնաշնորհուած չը վայելող միւս բոլոր աղգերը կը վճարէին սովորական մաքսը, 4 առ 100 :

Վաճառական համայնքները կամ սեղանաւորական ընկերութիւնները, մեր թագաւորնե-

---

\*\* Տե՛ս «Մի Տեսութիւն Կիլիկիոյ Հայկական Իշխանութեան վրայ», հեղինակ՝ Բակուրան :



Պանծալիս Այսա

րուն մատուցուած կամ խոստացուած դրամա-  
կան օգնութեան փոխարէն՝ հետզհետէ ստա-  
ցան աւելի կարեւոր իրաւունքներ: Այսպէս՝  
Ֆիորենցայի (Իտալական) Բերուծծի ընկե-  
րութեան մաքսի սակը իջաւ 1 առ 100ի. իսկ  
նոյն քաղաքի Պարտի ընկերութիւնը մաքսէ բո-  
լորովին ազատ թողուեցաւ: Ճիշդ միեւնոյն  
տարին (1335ին) Օչին թագաւորի կողմէ՝ Վենե-  
տացւոց տրուած պարտեւագիրը կը տրամադրէ  
որ,

ա. Հիւսուածներու եւ կերպասներու մաք-  
սը ջնջուի,

բ. Կաշեղէնի, մուշտակեղէնի եւ բրդեղէ-  
նի մաքսը ջնջուի,

գ. Վենետացի դինեպաններէ առնուած չա-  
բաթական մէկ թագաւորին դրամ տուրքը ջրն-  
ջուի. լայց եթէ անոնք չափի մէկ խարշախեն,  
կամ արքունի տուրքը չը վճարեն՝ պատիժի են-  
թարկուին,

դ. Թագաւորին պաշտօնեաները ինչ որ Վե-  
նետացիներու կը պարտին՝ վճարեն հնչուն դը-  
րամով, ոչ թէ ցորենով կամ աղով:

Վենետացիները Այասի մէջ կեդրոնացած՝  
Կիլիկիոյ առեւտրական եւ սեղանաւորական  
հրապարակին վրայ այնչափ խստապահանջ ու  
այնչափ զօշարաղ եղան որ, յաճախ ծանր վէ-  
ճեր կը ծագէին թագաւորներուն եւ Վենե-  
տական հասարակապետութեան միջեւ: Վենե-  
տացիները կը դանդատէին որ իրենց պարտա-

պանները թոյլտուութիւն կը վայելեն արքունի պաշտօնակալներէն. միւս կողմէ Հայերն ալ կը դանդատէին թէ Վենետացիք չարաչար կը շահագործեն զիրենք, եւ թէ առանց արքունի արտօնութեան երկրին ներսերն ալ կը հաստատուին՝ մետաքսն ու բուրդը աւելի աժան դրնելու, եւ ցփսին աւելի սլակաս ծախքով արտադրելու համար: Այդ տեսակ վէճի մը վերայ էր որ Վենետական ծովակալը 1303ին յարձակեցաւ Այասի ամրոցին վրայ եւ անիկա աւարի մատնեց, — թէեւ Վենետիկի կառավարութիւնը վերջէն վճարեց վնասին փոխարէնը: Ուրիշ ատեններ ալ Հայերը տեղի կուտային վէճի: Զորօրինակ, ձեռքը կտրեցին Վենետացի (հիւպատոսի) բարապանի մը որ իր ազակիցներէն բանտարկեալ մը փախցուցած էր: Վենետական Օերակոյտը դժուարաւ փակեց խնդիրը, եւ նոր պայմանադրով մը հաշտուեցաւ\*:

---

\* Ինչ որ վենետացիք կ'ընէին ի Կիլիկիա՝ նոյնը, եւ աւելին կը կատարէին ձեռովացիք ի Կ. Պոլիս: Նոցա դրամատիրական բռնաւորութիւնն այնչափ մեծ էր որ ամբուքիւններով գորացուցին Կալաթայի արուարձանը, եւ Յունական մայրաքաղաքին մէջ անկախ հող մը կազմեցին: Յորենի եւ ձուկի տուրեւտը մեծաշնորհ ըրած լինելով՝ Կ. Պոլիսը սովատանջ կ'ընէին երբ իրենց շահը պահանջէր:

Բացի այն մաքսէն որուն ենթակայ էին նե-  
րածեալ եւ արտածեալ վաճառքները՝ արքունի  
դանձուն ճոխ հասոյթ կ'ընծայէին հետեւեալ  
կարգի տուրքերն ալ,

ա. Ոսկիէ, արծաթէ, եւ թանկագին ա-  
ռարկաներէ,

բ. Միջնորդչէքէ (Սամսրչէք, Սանսուրիա)

գ. Նաւեր խարսխելու իրաւունքէ, (Անֆո-  
րանիում) մէկ կայմին երկու դրամ :

դ. Խուղարկողչէքէ, — վաճառականաց  
հակերուն, ծրարներուն եւ սնտուկներուն քրն-  
նութենէն :


ե. Բաժէ, — կիրճերու, դետանցքներու եւ  
սահմանադրու խնձերու տուրքերէն, (ինչպէս՝  
Կոռիկոս, Կուկլակ, Լաւդատ, Կապան, Կոմար-  
տիասի դուռը, Կաստիմ եւն.) :

---

Ոսիարի մաքսատանց, ձկնարաններու եւ բաժ-  
տուններու վարչութիւնը ձեռք անցուցած էին,  
եւ անոնցմէ տարեկան 200,000 ոսկիի հասոյթ-  
մը իրենց սեփականելով՝ դժկամութեամբ 30,-  
000 ոսկի կուտային կայսեր : Ասոնց ծայրա-  
յեղութեան դէմ ի գուր կը գինուի Քանդաֆու-  
գէն կայսրն իր դաշնակից վենետացիներով եւ  
Քադալաններով միասին : Ճենովացիք յաղթա-  
կան կը մնան եւ նոր դաշնագրով կը հաստա-  
տուին :

(Մի Տեսութիւն Հայկ. Կիլիկիոյ Իշխանու-  
թեան վրայ, — Բակուրան) :





S u p u n i

դ. Օտարզղի դինեարաններու շաբաթական արտօնադրէն, մէկ Թագաւորին դրամ\* :

է. Մուշտակի, կաշիի, եւ կանգունով չափ ուած չուխայի հակերէն :

ը. Պարտականները բանտարկել տալու տուրքէն, որմէ Վենետացիք ազատ թողուեցան 1338ին, երաշխաւոր տալու սրայմանով :

Արքունի դանձարանը կը մանէին՝ բռնուած դողօններու արժէքին մէկ երրորդ մասը, եւ օտարահայտակ վախճանեալներու ամբողջ ըստացուածքը : Ծովային արկածով ցամաք ինկած նաւն ու անոր պարունակութիւնը, նոյն խակ ճամբորդները, Միջնադարեան սովորութեամբ սեփականութիւն կը դառնային նոյն ցամաքին իշխանութեան : Վերջէն, նաւաբեկեալներու պաշտպանութեան սկզբունքը, Սաշա-կըրական օրէնսդրութեան մաս եղաւ, եւ Հայոց կողմէն յարգուեցաւ :

Ասոնցմէ դուրս կային խել մը ներքին տուրքեր ալ, ինչպէս՝ հողերէ, անտառներէ, կեն-

---

\* Թագաւորին դրամի (ըստ Եւրոպացւոց Tacorin կամ Taccolini, ըստ Արաբաց Թէք-Ֆուրիյէ) արծաթը կ'արժէր Ամերիկեան դրամով 12.4 սէնթ. յետոյ իջաւ 10 սէնթի : Լեւոն Մեծագործի ոսկին, դահեկան կոչուած, կ'արժէր \$5.20, Լեւոն Գ. ինը՝ \$3.00, Կոստանդին Գ. ինը՝ \$2.40 : V. Langlois, — Numismatiques Armeniennes.

դանիներէ, տօնավաճառներէ, տուգանքներէ,  
եւն. : Մահմետական հպատակներէն կ'առնը-  
ւէր յատուկ դիխահարկ մը, (չեմ գիտեր թէ ինչ  
գումար) : Հայերն ալ 1325էն յետոյ ենթարկը-  
ւեցան դիխահարկի : Ամեն մէկ այր մարդ,  
20էն վեր, կը սլարտէր վճարել տարեկան մէկ  
Բիզանդ սարակինեան, — 45 սէնթի համարժէք :


Հայկական Կիլիկիոյ ծովային վաճառակա-  
նութիւնը մեծ մասամբ Եւրոպացիներու ձեռքն  
էր, ինչպէս կը տեսնենք. բայց եւ այնպէս՝  
տարակոյս չկայ թէ Հայերն ալ, որ Ասիոյ խո-  
րերուն հետ հաղորդակցութեան դիխաւոր միջ-  
նորդներն էին՝ հետզհետէ կարեւոր բաժին ու-  
նեցան նաեւ անդրծովեայ ձեռնարկներու մէջ :  
Գիտենք որ Կոստանդին Պալլ, թադաւորական  
խնամակալը (1222—1226), ջանքեր ըրած էր  
նաւահանգիստներ բանալու եւ նաւեր կազմել  
տալու : Մարդօ-Բօլօ կը վկայէ թէ Այասէն  
դէպի Ակրոն (Աքեա) ճամբորդեց «Հայկական  
նաւով» : Վենետիկի հին արձանագրութիւննե-  
րու մէջ կը տեսնուի որ Հայերը հոն դնած են  
նաւեր եւ նաւու թիւեր : Միսուան կը յիշատա-  
կէ 1322ին Հնդկաստանէն Եւրոպա դարձող նաւ  
մը՝ Հայ նաւապետի ներքեւ :



Եզիպտոսի սուլթանները որ երբեք չէին նե-  
րած Հայոց մտերմութիւնը Եւրոպական Քրիս-

տոնէից հետ՝ նախանձաւառ աչքով կը դիտէին Այաւը, եւ քանի՛ քանի անգամներ փորձեցին ձեռք անցնել՝ Աղեքսանդրիոյ այդ վտանգաւոր մրցակիցը: Սիսուանեան տէրութեան տաղնապալի շրջանը կը բացուէր այն ատեն: Հայերը հիանալի արիութեամբ կռուեցան արդաւեւ վանեցին Գարասօնդօրի եւ Գօշթիմուրի բանակները, մինչեւ իսկ կոտորեցին «զգօրքն Մսրայ, ի մօտ ի յԱյաս», — ըստ Սմբատ Գունդատապալի—, բայց թշնամիները բազմաթիւ էին, անհամեմատ աւելի հզօր, ու անսանձօրէն կատաղի: Քսան տարի չանցած, 1322ին, Սուլթան Նասրը Մուհամմէտի հրամանով Եդիպտական նոր բանակ մը արշաւեց Կիլիկիա, եւ Թաթար եւ Թուրք զինակիցներու հետ միասին հազարաւորներ ջարդելէ ու դերեվարելէ յետոյ մտաւ Այաս, ու կործանեց Հայոց մեծափարթամ նաւահանդիստը:

Այասի անկումին լուրը շանթի պէս ինկաւ Քրիստոնեայ աշխարհին վրայ ու խոր թախծութեամբ համակեց ամենքը: Պապը, Յովհաննէս ԺԲ., աղօթքներ սահմանեց Հայոց համար, ընդհանուր կարեկցութեան կոչ ըրաւ, եւ 30,000 Փլորին (\$72,000) յատկացուց Այասի վերաշինութեան դործին: Մինչեւ այն ատեն Եդիպտոսի հետ տասնամեայ հաշտութիւն մը կնքուած էր արդէն, բայց թագաւորը, «պատանին Լեւոն», չէր հանդուրժեր խաղաղութեան ծանր պայմաններուն, եւ խել մը մի-



Չահան Գետ եւ Միսիսի Կամուրջը

Զոցներու դիմեց Եւրոպայի օգնութիւնն ապա-  
 հովելու եւ Սուլթանին լուծը թօթափելու\* :  
 Ամուսնացաւ Սիկիլիոյ թագաւորին աղջկան —  
 Ելէոնարայի — հետ . դեսպաններ դրկեց Եւրո-  
 պայի մայրաքաղաքները . նորանոր արտօնու-  
 թիւններ պարգեւեց Եւրոպացիներուն , եւ բա-  
 ցառիկ թոյլտուութեամբ վարուեցաւ Լատին  
 կրօնաւորներուն հետ , որոնք արդէն իսկ կը  
 յուզէին երկիրը հաւատաքննական վէճերով :  
 Պահ մը այնպէս թուեցաւ թէ պիտի արդիւնա-  
 ւորուին Լեւոնի փորձերը : Գերմանիոյ Լուդո-  
 վիկ կայսրը վառուեցաւ քրիստոնէական նա-  
 խանձաւորութեամբ . Նաւարրայի , Արակոնի  
 եւ Պոհեմիոյ թագաւորները նոր խաչակրու-

---

\* Հաշտութիւնը կնքուեցաւ Կոստանդին  
 կաթողիկոսի միջնորդութեամբը , Հալէպի  
 մէջ : Պայմանները հետեւեալներն էին ,—

1. Հայոց թագաւորը վճարէ տարին 1 ,—  
 200,000 դրամ (120,000 տոլարի չափ գումար  
 մը) :

2. Սուլթանին յատկացուի Այասի մաք-  
 սատան կէս հասոյթը :

3. Այասի մէջ եւ արեւելեան կողմը բնա-  
 կող ամեն Հայ Սուլթանին վճարէ տարեկան մէկ  
 Բիզանդ ոսկի (իբր 2 տոլար) խարաճ :

4. Սուլթանը վերաժինել տայ Կիլիկիոյ  
 ամրութիւնները ,— բացի Այասի ծովային բեր-  
 դէն :

թիւն մը կազմեցին . Անգլիոյ Եղուարդ Գ .ը ան-  
 միջական օգնութիւն խոստացաւ , իսկ Ֆրանսա-  
 յի Ֆիլիբը ղինուորական գործողութեանց ձեռք  
 դարկաւ : . . . Ասիտո՛ս սակայն , որ ո՛չ միայն  
 այդ ամեն խոստումներն ու ցոյցերը չիրակա-  
 նացան՝ հապա նաեւ անոնց հետեւանքով Հայոց  
 վիճակն աւելի վատթարացաւ : Այասի Հայերը  
 Եւրոպական նաւախումբերու մօտալուտ ժա-  
 մանումին վստահ՝ վէճի մը պահուն մի քանի  
 մահամետական սպաննեցին . ու անոնց հեռաբնակ  
 կրօնակիցները սկսան աղաղակել ,— «Այասու  
 խատիմի (հնաւուրց) քրիստոնէքն զԱյասու  
 խատիմի Տաճկնին են կոտորել . ամ մենք զձեզ  
 պիտի սպանենք» , ինչպէս կ'աւանդէ Ներսէս  
 Պալիենց : Եւ իրօք , անոնք եկան , գլուխ հա-  
 նեցին իրենց սպառնալիքը (1337ին) : Այս ան-  
 դամ առաւել քան երբեք անագորոյն էր թշնա-  
 մին . անպատմելի չարիք գործեց . «զբաղմա-  
 մարդ աշխարհն Հայոց» անապատ դարձուց : Ու  
 Լեւոն , իր յոյսերուն ու հաշիւներուն մէջ չա-  
 րաչար խարուած՝ «անճրկեցաւ , ու կատարեաց  
 զՍուլտանին կամքն , ու երես (տուաւ) զոր  
 կտրէր Ջահան (դետն) , բերդերովն , ու զեր-  
 կիրն , ու զՊԱՆԾԱԼԻՆ ԱՅՍՍ , զոր բազում ծա-  
 խիւք շինեալ էր» (Վասիլ Քարտուղար) :

Այսպէս ինկաւ Այաս , ու ցամքեցաւ Հայ  
 աշխարհին . կենսատու աղբիւրը : Այ մօտե-  
 ցած էր ճակատագրական աղէտալի թուականը :  
 Ադկէ 38 տարի վերջ պիտի իյնար Սիս մայրա-

քաղաքն ալ, ու պիտի շիջանէր Հայկա-  
կան անկախութեան աղօտափայլ աստղը\* :

Յաջորդ թուականներու մէջ, զորօրինակ  
Կոստանդին Բ. ի օրով, Այասը նորէն կը տես-

---

\* Ժամանակակից Իտալացի ազնուական  
մը, Մարիո Սանուո, կը գուշակէր այդ ա-  
ղէտը, եւ Արեւմուտքէն կը խնդրէր անմիջա-  
կան օգնութիւն: Իր մէկ գրքին մէջ այսպէս  
գրած է ան:— «Փոքր Ասիոյ եւ Սուլթանի եր-  
կիրներուն մէջտեղն է Հայաստան: Եթէ Սուլ-  
թանը գայն նուաճել յաջողի՝ այն ատեն իր տէ-  
րութիւնը կը կցուի Թրքական եւ Սարակիս-  
սական դրիշ իշխանութեանց, որոնք իրարու  
կ'օգնեն եւ դիւրաւ կը դիմադրեն Թաթարաց»:

Մօղոլ-Թաթարները, Եգիպտոսի դէմ մրդ-  
ուած գերակայութեան պայքարին մէջ պահ մը  
բարեկամ էին Հայոց, ինչպէս եւ բոլոր քրիս-  
տոնէից: Ղազան խան, թէեւ իսլամացած՝ ե-  
րուսաղէմը գրաւելէ վերջ Պապին դիմեց եւ-  
րոպայի իշխաններուն աջակցութիւնը խնդրե-  
լու (1300ին): Բայց հետզհետէ մահմետակա-  
նութիւնը Թաթարներուն մէջ աւելի զօրացաւ,  
եւ Հայոց հանդէպ անոնց քաղաքականութիւնն  
ալ փոխուեցաւ: Մարիո Սանուո կ'ըսէ ու-  
րիշ առթիւ մը թէ Հայկական թագաւորութիւ-  
նը ինկած է չորս գագաններու ժանիքներուն  
մէջտեղ,— «անիւծ Թաթարին, յովագ Սուլ-  
թանին, գայլ Թիւրքին եւ օձ ծովահէնին»:



նենք Հայոց ձեռքը: Աւելի վերջը, Կիպրոսի  
 Թադաւոր Պետրոս Ա.ն է որ կը տիրանայ ա-  
 նոր, ու կ'իւրացնէ «Հայոց Թադաւոր»ի տիտ-  
 ղոսն ալ, ինչպէս կը հասկցուի անոր հայա-  
 տառ արժաթ դրամէն: Բայց ատոնք վաղան-  
 ցուկ դէպքեր էին, որ խաբուսիկ Երազներու  
 պէս անցան դացին: Զիւլիպատրեան Շահսուար  
 1367ին նուաճեց Այասը եւ անոր շրջակայքը.  
 յետոյ յաջորդաբար եկան Վենետացիք եւ Ե-  
 դիպոտացիք, իսկ ամենէն վերջը, Սուլթան Սիւ-  
 լէյմանի օրով՝ Օսմանցիք (1522ին):

Ու հիմա, աւերակներու առջեւ տարած-  
 ուած ողորմելի տնակներու, եւ հինդ վեց հա-  
 րիւր հողինոց այլազգի բնակչութեան մը տըխ-  
 րատեսիլ պատկերը միայն կը մնայ այն փա-  
 աւոր շահատանէն, որ երբեմն նիւթ եղած  
 էր Պոքրաչիոյի, Արիոսթոյի եւ Զօսըրի պէս  
 բանաստեղծներու գրչին:

Երնէ՛կ այն առաւօտուն որ նորէն պիտի ծա-  
 գի ողջունելու Հայկական դրօշը Այասի ջուրե-  
 րուն վրայ...:

Նիւ Եորք, Հոկտ. 1917





# ԱԼԵՔՍԱՆՏՐԷԹ

## ԸՍՏ ԱՐԱԲԱՑ՝ ԻՍՔԵՆՏԵՐՈՒՆ

Կիլիկիոյ աշխարհին այսօրուան կարեւոր նաւահանգիստներն են Մերսինն եւ Ալեքսանտրէդը: Մերսինի նաւամատոյցը չունի բաւականաչափ խորութիւն. ատոր համար շոգենաւերը խարխախ կը նետեն բաց ծովուն մէջ, ցամաքէն հեռու: Քսկ Ալեքսանտրէդ կը գտնուի Հայոց Մոցին արեւելեան ափին վրայ, ընդարձակ աւազանի մը դոզը, լեռնային վիսաբոլորակով մը պատասպարուած փոթորիկներու դէմ: Ջուրը խորունկ է, եւ շոգենաւերը կրնան խարսխել ցամաքին մօտ:


Ալեքսանտրէդ մեծ ապագայ ունի իբրեւ մեկնակէտը երկաթուղային գիծի մը, որ կըրնայ ճիւղաւորուիլ դէպի Հայաստան, դէպի Միջագետք եւ դէպի Սիւրիա: Ասկէ կէս դար առաջ՝ Ալեքսանտրէդ փոքր գիւղաքաղաք մըն էր, 500 հոգի բնակչութեամբ, ճահիճներով շրջապատուած եւ հետեւաբար յոյժ վատաւորը: Հիմա բնակչութիւնը 10,000ի չափ է, եւ առողջապահական միջոցներով՝ կլիման ըզ-

գալապէս բարեփոխուած : Բարեկեցիկ ըն-  
տանիքները ամրան եղանակը կ'անցընեն Պէյ-  
լան , իբր տասը մղոն հեռու լեռնային ասան  
մը հայարնակ : Շատ մը հայազգի առեւտրա-  
կան յանձնակատարներ կային Ալեքսանտրէդի  
մէջ , տեղահանութիւններէն առաջ : Քաղա-  
քին հարաւային կողմը , Ճինկեան քէօյ ըս-  
ուած դիւղին մէջ դանուած է քարիւղի հոր մը :

Ալեքսանտրէդ արեւելեան Միջերկրականի  
երկրորդ նաւահանգիստն է կարճեւորութեամբ ,  
Պէյրութէն վերջը : Հայաստանի մեծ մասը ,  
Միջագետք եւ հիւսիսային Սուրիա՝ անոր մի-  
ջոցով կը հաղորդակցին արտաքին աշխարհի  
հետ : Ալեքսանտրէդէն կ'արտածուին բուրդ ,  
ձեռագործներ , արմտիք , արջառ եւ ոչխար ,  
ուտեստ , դիտոր , դահրի , մատուտակի ար-  
մատ , պիստակ , նուշ , չամիչ , մորթեղէն եւ  
կաշեղէն , մետաքսի բերք , չը բանուած պղինձ ,  
բամպակ , խէժ , շուշմայ , միայտ , ծխախոտ ,  
այծի մաղ , եւն . ; եւն . :

Ըստ աւանդութեան՝ Ալեքսանտրէդի հիմ-  
նադիրն է Մեծն Ալեքսանդր , որ մօտակայ Իս-  
սսի կիրճին մէջ խորտակած էր Դարեհի բա-  
նակը , Քրիստոսէ 333 տարի առաջ : Քաղաքին  
նախկին անունն էր Ալեքսանտրիա առ Իսսո-  
սիւ , կամ Ալեքսանտրիա Կիլիկիոյ : Յետոյ  
կոչուեցաւ Փոքր Ալեքսանտրիա կամ Ալեքսան-  
տրէդ : Ըստ Հայոց՝ Ալեքսանդրեակ :

Խաչակիր բանակ մը Թանգրէտի առաջնոր-




Ալեքսանդրի մէկ մասը

դուժեամբ 1097ին մտաւ Ալեքսանտրէդ, եւ սի  
րով ընդունուեցաւ տեղաբնակ Հայերէն:

Այդ թուականէն քիչ վերջ՝ Ալեքսանտրէդ  
ենթարկուեցաւ Հայկական Իշխանութեան, ու  
այնպէս մնաց երկար ատեն:

Թէ՛ Հռոմէական եւ թէ՛ Բիւզանդական  
տիրապետութեանց ներքեւ՝ Կիլիկիոյ նահան-  
գին սահմանը կը վերջանար Դրունք Ասորոց  
ըստած լեռնային կապանին հիւսիսային կող-  
մը, հիմակուան Բայասի դաւառակէն դէպի ա-  
րեւելք: Բայց հայ իշխաններու եւ թագաւոր-  
ներու օրով՝ երկրին տարածութիւնն աւելի  
ընդարձակուեցաւ, ու հարաւէն հասաւ մինչեւ  
Ռասիսանձիւր հրուանդանը, (արաբերէն Ռաս-  
էլ-իսանգիր, այսինքն խոզի գլուխ), որ է Ամա-  
նոսեան լեռնաշղթային շարունակութիւնն ու  
ծայրը: Պատճառներ կան ըսելու թէ ժամա-  
նակ մը Հայկական իշխանութիւնը տարածուե-  
ցաւ այդ հրուանդանէն ալ անդին, մինչեւ Սե-  
ւոտ կամ Սուէյտիյէ:

Այդպէս ուրեմն՝ Ալեքսանտրէդ կը դանը-  
ւէր Հայկական սահմանէն ներս: Առաջին ան-  
գամ մեր Պարոն Թորոս Բ.ն է որ Անտիոքի  
Ռենալտ իշխանին հետ դործակցարար այդ կող-  
մերը գրաւեց Յոյներէն: Քիչ վերջ անոնք իրա-  
րու հետ վէճի բռնուեցան սահմանագծի մա-  
սին, եւ պատերազմեցան: Թորոս յաղթական  
դուրս եկաւ (1155ին): Շատ չանցած՝ կը  
տեսնենք որ Ալեքսանտրէդի եւ Անտիոքի մէջ-




Պէլլան եւ Սեւ Լեռները

տեղ գտնուած դղեակ մը Թորոսի կողմէ պար-  
գեւ կը տրուի Ֆրէրներուն, այսինքն Տաճա-  
րական Ասպետներուն, անոնց զինակցութիւնը  
ասլահուլեյու համար, ինչպէս կ'ըսէ Միխայէլ  
Ասորի պատմիչը, — «Իւրով կամօք ետ ի Ֆր-  
րերքն, զդղեակն որ կայր ի սինօռն Անտիո-  
քու, եւ նոքա երդուան նմա օգնել Հայոց յա-  
մենայն կարիս, մահու չափ, եւ յամենայն իրս  
ցաւակցեալ» :

Հայերու եւ Հատիններու միջեւ նորէն կը  
յուզուին սահմանագլխի խնդիրներ, Լեւոն Բ. ի  
(Կիլիկիոյ առաջին թագաւորին) օրով: Ան-  
տիոքի իշխանապետութեան պատկանող մի քա-  
նի ամրոցներ Սալահէտտինի ձեռքը անցած է-  
ին Երուսաղէմի թագաւորութեան կործանու-  
մէն վերջ: Հազիւ թէ Սալահէտտինի բանակը  
հեռացած էր՝ երբ Լեւոնի զօրքերը եկան տե-  
ղաւորուեցան անոնց մէջ: Այդ դէպքերու ակ-  
նարկելով է որ մեր ժամանակագիրներէն մին  
կ'ըսէ թէ Լեւոն «էառ զԱրասուս եւ զՊաղրաս»,  
իսկ Վահրամ Բարուն՝ թէ «յԱռասուս գաւառն  
եկեալ, եւ Պաղրասայ դղեկին տիրեալ» :

Պաղրասի դիրքն այնչափ ամուր էր որ Սա-  
լահէտտինի զօրքերը դժկամակութեամբ կը  
պատերազմէին: Բայց բերդապահ զօրքերը  
ջուրի եւ սնունդի չզոյութենէն նեղուելով  
հաշտութիւն խնդրեցին, եւ արտօնուեցան զի-  
նաթափութեամբ ազատ թողուելու: Սալահէտ-  
տին քանդել տուաւ ամրութիւնները և վերադար





U p e r u

ձաւ : Արաբ պատմագիր Իպն էլ Աթիյր կը վը-  
կայէ թէ Պաղրաս անկէ վերջ անցաւ Հայոց  
ձեռքը եւ վերաշինուեցաւ անոնց իշխանին ձեռ-  
քով, որ էր «Իպն Լիօն Սահիպ էլ Էրմէն» :

Պաղրասի մօտակայ ուրիշ բերդ մը, Դար-  
պսակ, Լեոնի կողմէ իբրեւ աւատական պար-  
զեւ տրուեցաւ Հիւրական Ասպետներուն, ո-  
րոնք Հայոց նպաստաւոր դիրք կը բռնէին,  
մինչ Տաճարականները իրենց ուխտին դրժելով  
Լատիններուն թեւ թիկունք կ'ըլլային :

Դարպսակը, որ Սարայ անուանով ալ ծա-  
նօթ է հին պատմագրութեանց մէջ, հայկական  
ամրոց մըն էր, Սաչակիրներու երեւումէն ա-  
ռաջ իսկ հիմնուած : Դարպսակ կը գտնուի Ա-  
մանոս լեռան ստորոտը, Ալեքսանտրէդի եւ  
Անտիոքի մէջտեղուանքը, ատոնց երկուքէն ալ  
հինգ վեց ժամու ճամբայ, ձիով :

Հայկական Կիլիկիոյ հարաւային սահման-  
ները աւելի ընդարձակուեցան երբ Լեւոն խզեց  
իր բոլոր յարաբերութիւնը Լատինաց հետ,  
պատերազմ հրատարակեց Անտիոքի իշխանա-  
պետութեան դէմ, եւ երեք անգամ գրաւեց  
այդ քաղաքը, (1203ին, 1206ին և 1217ին) (\*):  
Կռիւին պատճառն էր՝ Անտիոքի դահուն ժա-  
ռանգութեան խնդիրը : Լեւոն կը պաշտպանէր

---

(\*) Լեւոնէն 1300 տարի առաջ Անտիոք  
մտած էր ուրիշ հայ աշխարհակալ մը, Մեծն  
Տիգրան :

իրաւունքը մանկահասակ Ռուբէն-Ռէյմոնդի ,  
որ զաւակն էր իր Ռուբէն եղբօր աղջկան եւ  
Անտիոքի իշխան Ռէյմոնդի : Գահուն միւս  
թեկնածուն էր՝ Տրիպոլսոյ կոմսը , միականին  
Պեմունդ : Լեւոն ամենայն սաստկութեամբ  
մոեց պայքարը , կարեւորութիւն չընծայելով  
մինչեւ իսկ Իննովկենտիոս Պապի բանադրան-  
քին : Խնդիրը կարգադրուեցաւ վերջապէս փո-  
խադարձ զիջողութիւններով , բայց Լեւոնի  
ձեռքը մնացին վիճելի բերդերը , Պաղրաս ,  
Գարսասակ , եւն . :

Լեւոնի թագադրութեան հանդէսին ներկայ  
դտնուող 45 բերդատէր պարոններու շարքին  
մէջ առաջին տեղը կը դրաւէր «Իշխանն Պաղ-  
րասայ Ատանն» . իսկ երկրորդն էր՝ «Իշխանն  
Ճկերոյն Աւսդն» : Ասոնց երկուքն ալ Քրանք  
ցեղէ էին . վերջինս՝ հաւանօրէն Գերման :  
Ճկեր զաւառը կը համապատասխանէ հիմակ-  
ուան Տէօրթ-Եօլի եւ Ճոկ-Մարդուանի շրջա-  
նակներուն : Լեւոն այս հողամասը դրաւի դրաւ  
Տաճարականներուն , երբ ասոնցմէ փոխ կ'առ-  
նէր 20,000 սարակինեան բիզանդ ոսկի , դրամ-  
օժիտ տալու համար իր Ռիթա աղջկան :

Հայկական Կիլիկիոյ հարաւային սահմա-  
նին վրայ էր Եիհ-էլ-Հատիտ ըսուած ծովային  
դիրքը , զոր Հայոցմէ կը պահանջէր Եգիպտոսի  
սուլթանը Պիպարս Պնտուգտար : Հեթո՛ւմ թա-  
գաւոր գոհացում չտուաւ պահանջին եւ ատոր

վրայ էր որ տեղի ունեցաւ Մառիի կիրճին  
(Տէրպէնտ-էլ-Մէրրիի) աղէտալի պատերազմը  
1266-ին : Շիհ-էլ-Հատիտ հիմա կը պատկանի  
Անտիոքի գաւառին :

Կանոնիկոս Վիլեպրանտ Օլտէնպուրկեան  
կը յիշատակէ՝ Անտիոքէն Ալէքսանտրէդ Եր-  
թալու ճամբուն վրայ անառիկ եւ բրդաւոր  
բերդ մը, Կաստիմ անուն, երեք պարիսպներով  
չըջապատուած : Վիլեպրանտի խօսքով՝ Կաս-  
տիմ սահմանաժայրն էր Հայոց լեռներուն, եւ  
կը պաշտպանէր Հայաստանի մուտքը : Անտի-  
ոքի իշխանները աչք տնկած էին այս բերդին  
վրայ ալ, զոր առաջին անգամ Յոյներէն խլած  
էր Լեւոնի հօրեղբայրը Մլէհ :

Հայկական իշխանութեան հարաւային  
սահմանէն ներս կար ուրիշ նաւահանգիստ մըն  
ալ, Պօնէլ, զոր Լեւոն Տաճարական ասպետ-  
ներուն յանձնած էր ուրիշ դղեակներու հետ  
միասին, Անտիոքեան վէճին փակումին վրայ :  
Իբր յիսուն տարի վերջ, երբ Պնտուզտար  
սուլթանը Անտիոքի վրայ կուգար՝ ասպետները  
փախան (\*) : Ատկէ երկու տարի չանցած՝ Հա-  
յերը վերադարձան Թաթարներու օգնութեամբ

---

(\*) Գուլիէլմոս, Տիւրոսի եպիսկոպոսը,  
կը գրէ այսպէս. — «Li Templiers abandon-  
nerent lor chastiaux II, Gaston et Roche de  
Rusol, et la terre de Port Bounel, a l'entre'e  
d'Ermenie» .



Վերջին Լեւոն Թագաւորի Կիսարձանը

եւ նորէն տիրացան իրենց սեպհականութեանց (1270) :

Ալեքսանտրէի ամարանոց Պէյլան աւանը , զոր վերը յիշեցի , կը պարունակէ հայ բնակչութիւն մը , որ մինչեւ մօտ ատեններս իր վրայ կը պահէր այդ շրջանակի վաղեմի Հայութեան յատուկ դրոշմ մը :

Այիշանի Սիսուանին մէջ կը տեսնենք հետաքրքրական յիշատակութիւն մը Պէյլանցիներու մասին , 1773-ին դրուած Պօղոս վարդապետ Մեհերեանէն որ Քրանսական հիւպատոսին հիւր եղած էր ի Պէյլան : Հետեւեալը կը քաղեմ անոր տողերէն՝ մեր աշխարհաբարին վերածելով բնադիրը .

«Երբ Բելանի քարավէժ ճամբէն դէպի լեռը կ'ելլէինք՝ ջորեպանները իրարու հետ կը խօսէին , բայց մենք չէինք հասկնար անոնց լեզուն , որովհետեւ ո՛չ Արաբերէնի կը նմանէր , որ Քրդերէնի , ոչ Հայերէնի , ոչ ալ ուրիշ ազգի մը լեզուին : Մենք կը զարմանայինք անոնց լեզուախօսութեան վրայ : Յետոյ՝ այլազգական լեզուով (Թիւրքերէն) հարցուցի անոնց թէ՛ դուք ո՞ր ազգէ էք : Պատասխանեցին թէ՛ Հայ ենք եւ Հայերէն կը խօսինք . . . : Ատոր վրայ՝ անոնց խօսքերուն ուշադրութիւն դարձնելով տեղ տեղ հայերէն բառեր կը հասկնայինք . . . : Օրին մէկը հինգ վեց զինուած անձեր եկան մեզի , հիւպատոսին տունը , մեզմէ Սաղմոս եւ Աւետարան ուզելու . . . : Ըսի իրենց թէ ի՞նչ

պիտի ընէք Սաղմոսն ու Աւետարանը : Անոնցմէ մին պատասխանեց թէ՛ ես Տէրտէր եմ : Ըսի իրեն թէ՛ դուն այսպէս զէնքո՞վ կ'երթաս եկեղեցի : Այո՛, ըսաւ, եկեղեցին մտնելուս պէս զէնքերը մէկ դի կը դնեմ, եւ պատարագէն վերջ դինուած դուրս կ'ելլեմ եկեղեցիէն» :

Տարակոյս չկայ թէ՛ Պէյլանի եւ շրջակայից հայ ընտանեակներու շնորհիւ Ալեքսանտրէզ շատ անգամ պաշտպանութիւն կը գտնէր Եզիպտացիներու դէմ :

Արաբ պատմագիր Մագրիզիի վկայութեամբ՝ Ալեքսանտրէզը առաջին քաղաքն էր Հայոց Աշխարհի սահմանէն ներս : Իսկ արեւմտեան յիշատակագիրներու համեմատ՝ Հայերը Հռոդոսի ասպետներուն օգնութեամբ Եզիպտացիներէն ետ առին Ալեքսանտրէզը, 1347 ին, Կոստանդին Բ. թագաւորին օրով :

Այսչափը բաւական կը կարծեմ ցոյց տալու թէ՛ Ալեքսանտրէզ նաւահանգիստը անբաժանելի մասն է Հայկական Կիլիկիոյ, թէ՛ աշխարհագրօրէն եւ թէ՛ պատմականօրէն :









## Ց Ա Ն Կ

	Երես
Կիլիկիոյ Հայկական Թագաւորութիւնը	5
Հայոց Մեծ Նաւահանգիստը	39
Ալեքսանտրէք	63









Հայկական Կիլիկիոյ Արեւելեան Մասը

## ՃՇԴՈՒՄ

Կիւղնոս գետը, որուն ջրվէժներուն պատկերը կը տեսնուի էջ 21ի վրայ, հիմա կը կոչուի Թարսուս Չայը, ոչ թէ Սէյհան, ինչպէս ըսուած է սխալմամբ: Սէյհանի պատմական անունն է Սարոս:

ԳԻՆ 50 ՍԷՆԹ

---

---



BIBLIOTHEQUE NATIONALE DE FRANCE



3 7531 01737578 4